

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՌԴ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

**2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**ՈՒՅՏՈՐ**

**ԳՈՒՐԳԵՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ**

ՎԱՆԱԶՈՐ

**ՆԵՐԱՏՄԱԿԱՆ ԽՈՍՔ**

2014 թվականը մեր բուհի պատմության մեջ իրադարձային եղավ. ՀՀ Կառավարության ապրիլի 30-ի թիվ 485-Ն որոշմամբ «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ը վերանվանվեց «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» ՊՈԱԿ: Անշուշտ, կատարվածը սուկ անվանափոխություն չէ, քանի որ արդյունքում չեն ենթադրվում միայն փաստաթղթային փոփոխություններ: Իրականում կարգավիճակային այս փոփոխությունից հետևում են մի շարք բովանդակային, արմատական փոփոխություններ՝ պայմանավորված այն մարտահրավերներով, որոնց այսօր փորձում են դիմակայել համալսարաններն առհասարակ, մասնավորապես նաև Երևանի պետական համալսարանը, որի գործունեությունը մեր բուհի հետագա զարգացման ճանապարհին կդառնա օրինակելի, և որին հետևելով՝ մենք պետք է փորձենք կազմակերպել մեր բուհում կատարվող առաջիկա գործընթացները:

Համալսարանի վերափոխվելով՝ փոխվում են նաև այն ուղղությունները, որոնք նախկինում գերակա են եղել բուհի պատմության ողջ ընթացքում: Ասվածը ենթադրում է, որ վերափոխվում են նաև այն տեսլականն ու առաքելությունները, որոնք ընկած են յուրաքանչյուր բուհի հայեցակարգի և գործունեության հիմքում:

Այն ժամանակահատվածը, որում մենք ծավալել ենք մեր գործունեությունը, ընդհանուր առմամբ բնութագրվում է անցումային շրջանին բնորոշ գծերով: Այդ է պատճառը, որ բուհում կատարվող յուրաքանչյուր քայլ պետք է առավելագույնս հիմնավորված և համակարգված բնույթ կրի: Ասվածը վերաբերում է և՛ բուհի ինքնավարությանը, և՛ կառավարմանը, և՛ ուսանողակենտրոն ուսուցմանը, և՛ որակի ապահովմանը, և՛ գիտական գործունեությանն ու այլ ուղղությունների միտված գործողություններին, որոնք բոլորը միասին ուրվագծում են տեսլականից իրականին տանող ճանապարհը:

Մեր համալսարանն ունի մարդկային և մտավոր այն ռեսուրսները, որոնց ճիշտ իրացումով կարելի է հասնել հաջողության: Համոզված եմ, որ ողջ կոլեկտիվով կհաղթահարենք այս շրջանին բնորոշ դժվարությունները հանուն մեր երկրի, այն է՝ հանուն մեր այսօրվա և վաղվա սերունդների:

**ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱՏՏՅԱՆ**

**ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**

2015թ. կրթական գործընթաց է կազմակերպվել առկա ուսուցման համակարգում 36, հեռակա ուսուցման համակարգում՝ 34, մագիստրատուրայում՝ 12 մասնագիտական կրթական ծրագրերով:

*Աղյուսակ 1. Մասնագիտական կրթական ծրագրեր (բակալավրի կրթական ծրագրով)*

Պատիչ	Մասնագիտություն	Որակավորում	
		Ըստ ՀՀ կառավարության 2007թ. օգոստոսի 30-ի թիվ 1038 որոշման	Ըստ ՀՀ կառավարության 2014 հոկտեմբերի 23-ի թիվ 1191 որոշման
031000	Հայոց լեզու և գրականություն	Մանկավարժության բակալավր, ուսուցիչ	Բանասիրության բակալավր
032400	Ռուսաց լեզու և գրականություն	Մանկավարժության բակալավր	Բանասիրության բակալավր
031300	Անգլերեն լեզու և գրականություն	Մանկավարժության բակալավր	Բանասիրության բակալավր
030600	Լրագրություն	Լրագրության բակալավր	Լրագրության բակալավր
032300	Թարգմանչական գործ	Լեզվաբանության բակալավր	Լեզվաբանության բակալավր
051100	Մանկավարժություն և մեթոդիկա(տարրական կրթություն)	Մանկավարժության բակալավր, ուսուցիչ	Մանկավարժության բակալավր
051100	Մանկավարժություն և մեթոդիկա(մախադպրոցական կրթություն)	Մանկավարժության բակալավր, ուսուցիչ	Մանկավարժության բակալավր
051000	Մանկավարժություն և հոգեբանություն	Մանկավարժության և հոգեբանության բակալավր	
030300	Հոգեբանություն	Հոգեբանության բակալավր	Հոգեբանության բակալավր
051300	Մոցիալական մանկավարժություն	Մանկավարժության բակալավր, ուսուցիչ	Մանկավարժության բակալավր
053400	Մանկավարժություն և սոցիոլոգիա	Մանկավարժության բակալավր, ուսուցիչ	
050800	Կերպարվեստ և գծագրություն	Մանկավարժության բակալավր, ուսուցիչ	
	Կերպարվեստ		Մանկավարժության բակալավր
050700	Երաժշտական կրթություն	Մանկավարժության բակալավր, ուսուցիչ	Մանկավարժության բակալավր
030400	Պատմություն	Մանկավարժության	Պատմության

		բակլավր, ուսուցիչ	բակլավր
030500	Իրավագիտություն	Մանկավարժության բակլավր, ուսուցիչ	Իրավագիտության բակլավր
020400	Աշխարհագրություն	Մանկավարժության բակլավր, ուսուցիչ	Աշխարհագրության բակլավր
080200	Կառավարում	Կառավարման բակլավր	Կառավարման բակլավր
071700	Սոց.մշակութային գործունեություն	Սոց. մշակութային գործունեության բակլավր	
040100	Սոցիալական աշխատանք	Սոցիալական աշխատանքի բակլավր	Սոցիալական աշխատանքի բակլավր
	Մերվիս		Մերվիսի բակլավր
010100	Մաթեմատիկա	Մանկավարժության բակլավր, ուսուցիչ	Մաթեմատիկայի բակլավր
050200	Ինֆորմատիկա (տեղեկաբանություն)	Մանկավարժության բակլավր, ուսուցիչ	
010400	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկայի բակլավր	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկայի բակլավր
010500	Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա	Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկայի բակլավր	Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկայի բակլավր
010600	Ֆիզիկա	Մանկավարժության բակլավր, ուսուցիչ	
050600	Տեխնոլոգիա և ձեռնարկչություն	Մանկավարժության բակլավր, ուսուցիչ	
020200	Կենսաբանություն	Մանկավարժության բակլավր, ուսուցիչ	Կենսաբանության բակլավր
020100	Քիմիա	Մանկավարժության բակլավր, ուսուցիչ	Քիմիայի բակլավր
021000	Դեղագործական քիմիա	Դեղագործական քիմիայի բակլավր	Դեղագործական քիմիայի բակլավր
020800	Բնապահպանություն և բնօգտագործում	Բնապահպանության բակլավր	Բնապահպանության բակլավր
032100	Ֆիզիկական կուլտուրա և սպորտ	Մանկավարժության բակլավր, ուսուցիչ	Մանկավարժության բակլավր

*Աղյուսակ 2. Մասնագիտական կրթական ծրագրեր (մագիստրոսի կրթական ծրագրով)*

<b>Դասիչ</b>	<b>Մասնագիտություն</b>	<b>Որակավորում</b>
031000	Հայոց լեզու և գրականություն	Մանկավարժության մագիստրոս
032400	Ռուսաց լեզու և գրականություն	Մանկավարժության մագիստրոս
031300	Անգլերեն լեզու և գրականություն	Մանկավարժության մագիստրոս
051000	Մանկավարժություն և հոգեբանություն	Մանկավարժության և հոգեբանության մագիստրոս
030400	Պատմություն	Մանկավարժության մագիստրոս
030500	Հանրային կառավարում	Հանրային կառավարման մագիստրոս
080200	Կրթության կառավարում	Կառավարման մագիստրոս
050200	Ինֆորմատիկա(տեղեկարանություն)	Մանկավարժության մագիստրոս
020200	Կենսաբանություն	Մանկավարժության մագիստրոս
020100	Քիմիա	Մանկավարժության մագիստրոս

Մասնագիտական կրթական ծրագրերի թվի մեծացումը պայմանավորված է մանկավարժության ուղղվածությանը զուգընթաց գուտ համալսարանականների ներդրմամբ: Այսպիսով՝ ունեցած 7 գուտ համալսարանական մասնագիտական կրթական ծրագրերին ավելացել են ևս 9 համալսարանական ծրագրեր:

Կարելի է փաստել, որ ՎՊՀ-ի 2010-2015 թթ. զարգացման հայեցակարգով առաջադրված խնդիր է լուծվել. ամբողջությամբ կատարվել է կրթական գործունեության զարգացման ռազմավարության խնդիրը՝ կրթական ծրագրերի համալսարանականացման գործընթացի առաջին փուլի ռազմավարության մշակում, համալսարանական կրթական ծրագրերի ստեղծման փորձ, ներդրված կրթական ծրագրերի քարտեզավորում:

Բարձրագույն կրթության համակարգի կատարելագործման խնդիրը տասնամյակների պատմություն ունի. դեռևս խորհրդային շրջանում (վերջին տասնամյակներում՝ հատկապես) շեշտվում էին համակարգի արդյունավետությունը, մասնագիտական ծրագրերի ստեղծման դասընթացային առարկայական կառուցվածքը, միջառարկայական թույլ կապերը, ուսանողների ինքնուրույնության պակասը կրթական գործընթացում, գիտելիքների կիրառման հմտության և կարողությունների անբավարար մակարդակը:

Կոմպետենցիաների հիման վրա կառուցված մասնագիտական կրթական ծրագրերը, համապատասխան մոտեցումները ևս նախորդել են

Բոլոնիայի տարածքին ինտեգրվելուն, սակայն փոփոխությունները խիստ անբավարար են եղել շրջադարձ կատարելու համար:

Վերջին տասնամյակում ՀՀ կրթական համակարգի մեջ կատարվել են լուրջ տեղաշարժեր, ինչը, անշուշտ, իր անմիջական ազդեցությունն է ունեցել կրթական գործունեություն իրականացնող հաստատությունների զարգացման և իրենց առջև դրված խնդիրների լուծման ու նպատակների իրագործման վրա:

Համալսարանի զարգացման հայեցակարգում ամրագրվել է եվրոպական չափանիշներին համապատասխանող կրթական ծառայությունների մատուցման, ուսանողակենտրոն համակարգի ստեղծման, բարձրագույն կրթությամբ մասնագետներով աշխատաշուկայի ապահովման, մասնագետների որակավորման բարձրացման խնդիրների լուծումը:

Ճիշտ ուղղորդված գործունեությունը դնում է կարիքների վերհանման և դրան միտված պլանավորման առաջնահերթության խնդիրները: Վերջինիս համար հարկ էր ապահովել ՄԿԾ-ների ճկունությունը, դրանց՝ հասարակության տարբեր շերտերին, կյանքի, տնտեսության տարբեր ոլորտներին համապատասխանեցումը:

Խնդրի լուծման համար վերջին երկու տարիների ընթացքում անընդհատ կատարվել է ՄԿԾ-ների վերանայում և բարելավում:

Դեռևս 2014 թվականին ֆակուլտետային ուսումնամեթոդական խորհրդի նիստերում, ըստ մեր կողմից հաստատված ժամանակացույցի, քննարկվել են թե՛ ՄԿԾ-ները, թե՛ դրանց ինքնավերլուծությունները. 2015 թ. սկսվել և շարունակվում է դրանց բարելավումը: Վերհանված էական թերություններից էին կրթական վերջնարդյունքների, դրանց կոմպետենցիաների և ուսումնական պլանի առարկայախմբերի ոչ բավարար փոխկապակցվածությունը:

2015 թվականին, ելնելով նաև ՄԿԾ-ների համալսարանականացման առաջնահերթությունից, որոշակիորեն խնդիրը լուծվել է. ստեղծվել են մատրիցաներ (աղյուսակներ):

Հնարավորինս գտվել են չհիմնավորված, դասընթացի բովանդակային կողմից չբխող, հարմարեցված կոմպետենցիաները, վերանայվել են նաև որոշակի վերջնարդյունքներ: Ուսումնական պլանները նշված հիմքերի վրա փոփոխություններ են կրել, և բարելավումն առավել շոշափելի կլիներ, եթե հստակեցված լիներ «մոդուլ» եզրույթը: ՀՀ ԿԳ նախարարության կողմից մշակված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման» օրինակելի

կարգը չի լուծում խնդիրը. մոդուլի և դասընթացի հարաբերակցության հարցը հստակ չէ: Այդ է պատճառը, որ 2015-ին ներդրված, 2016-ին ներդրվելիք ուսումնական պլանները ևս խնդիրն ամբողջությամբ չեն լուծել:

Բոլոր ուսումնական պլանների մեջ որոշակիորեն լուծվել է ուսանողների ինքնուրույնության իրականացման հարցը. շաբաթական միջին ծանրաբեռնվածությունը 25-26 ժամ է: Փոխված են նաև դասախոսություն/գործնական, սեմինար, դասախոսություն/լաբորատոր հարաբերակցությունները՝ հոգուտ գործնական մասի:

*Աղյուսակ 3. Ուսումնական պլաններում կատարված փոփոխությունները*

Մասնագիտություն	Գործող ուսումնական պլան		2015-16 ուստարում ներդրված ուսումնական պլաններ	
	Ժամ	%	Ժամ	%
Կենսաբանություն	1499	49.37	1728	53
Դեղագործական քիմիա	1760	54.35	1826	55.9
Սաթեմատիկա	1580	57	1808	58
Հայոց լեզու և գրականություն	1524	57	1974	61
Ռուսաց լեզու և գրականություն	1424	54	1974	61
Կառավարում*	1370	52.81	1558	51.58
Սոցիալական մանկավարժություն	1245	50.8	1798	57.11

\*«Կառավարում» մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլանում սեմինար պարապմունքները փոխարինվել են գործնական աշխատանքներով:

Փոփոխության խնդիրը բխում է նաև «Դասախոսը ուսանողի աչքերով» հարցման արդյունքների պահանջից. ուսանողության զգալի մասը դնում է վերոնշյալ խնդիրը, ինչը և հաշվի ենք առել:

Վերջին տարիներին կամընտրական դասընթացների ընտրությունը թեև կատարվում էր ուսանողների կողմից (վերջնական փուլը՝ փետրվար-մարտ ամիսներին), սակայն ոչ բոլոր դեպքերում է ճիշտ, անկողմնակալ, արդարացի ընտրություն կատարվում: Ուսանողները հաճախ ելնում էին նախորդ սերնդի դիրքորոշումից, այնինչ մեր կայքում տեղադրված առարկայի ուսումնամեթոդական փաթեթները հնարավորություն են տալիս ծանոթանալու դասընթացի

վերջնարդյունքներին, բովանդակությանը և ավելի հիմնավոր ընտրություն կատարելու:

Նախատեսվում է խնդրի ավելի ճիշտ լուծման համար անցկացնել դասախոսություն-ներկայացումներ, որոնք ուսանողին հնարավորություն կտան լսելու նույն դասընթացը՝ տարբեր դասախոսների կողմից, որին կհաջորդի վերջնական ընտրությունը:

2016 թ. փետրվար-մարտ ամսին նման փորձ կարվի, թեև այս մոտեցումը պետք է իրականացվեր դեռ 2015 թ.-ին:

Խնդիրը, անկասկած, կարևոր է, քանի որ, ելնելով ուսանողակենտրոն համակարգի հրամայականից, մեծանում է կամընտրական դասընթացների տեսակարար կշիռը:

Ստորև բերվող աղյուսակում ակնհայտ է կամընտրական դասընթացների տեսակարար կշռի ավելացումը (մյուս մասնագիտական կրթական ծրագրերում ևս նույն պատկերն է):

*Աղյուսակ 4. Ուսումնական պլաններում կամընտրական դասընթացների տեսակարար կշիռը*

<i>Մասնագիտություն</i>	<i>Գործող ուսումնական պլան</i>		<i>2015-16 ուստարում ներդրված ուսումնական պլաններ</i>	
	<i>Կամընտրական դասընթացներ</i>			
	<i>կրեդիտ</i>	<i>%</i>	<i>կրեդիտ</i>	<i>%</i>
Հայոց լեզու և գրականություն	12	5	39	16.3
Մաթեմատիկա	13	5.4	41	17.1
Կենսաբանություն	17	7.08	47	19.6
Պատմություն	18	7.5	36	15
Մանկավարժություն և մեթոդիկա(տարրական կրթություն)	19	7.9	41	17.1

Կրթության զարգացման 2016-2025 պետական ծրագրի նախագծի մեջ որպես գերակայություն ամրագրված է. «... մասնագիտական կրթության որակի բարձրացում և համապատասխանեցում աշխատաշուկայի պահանջներին, շրջանավարտների զբաղվածության խթանում»:

Խնդիրը նոր չէ. պահանջը միշտ էլ եղել է գերակայող: Խնդրի լուծումը հնարավոր է հիմնականում երկու ճանապարհով՝ դասավանդման և ուսումնառության որակների բարձրացմամբ, մասնագիտական կրթական ծրագրերի վերջնարդյունքների և շուկայի պահանջների համահունչ լինելով:



Ցանկացած գործընթաց պետք է իրականացվի քննություն բռնած մասնագետների կողմից, ուստի պետք է դասավանդողներին տանել մրցակցային դաշտ: Առայժմ հարցը փորձելու ենք կարգավորել վերը նշված ճանապարհով. սա ևս բխում է ուսանողակենտրոն ուսուցման խնդիրներից:

Բարձրագույն կրթության երկաստիճան համակարգում կարևորվում է մասնագիտական կրթական ծրագրերի կրթական և հետազոտական հատվածների զուգակցումը: ՈԱՇ-ի 6-րդ մակարդակում հետազոտական կարողությունների զարգացման հետազոտական բաղադրիչի պարտադիր պահանջ չկա. այդ հիմքով էր բակալավրի ուսումնական պլաններից հանվել «Ավարտական աշխատանք» բաղադրիչը: Մակայն միջավայրը, մակարդակից մակարդակ անցումը (7-րդ մակարդակ) թույլ, բայց այլ հիմնավորումներով դնում է հետազոտական մասի խնդիր. նոր ուսումնական պլաններում այս ուղղությամբ բարելավում կատարվել է: Բացի այդ՝ 2015-2016 ուսումնական տարում 85 ՄՈԳ ապահոված ուսանողներին թույլ է տրվել կատարելու ավարտական աշխատանք. պարտադիր պայման է նշվել աշխատանքների ինքնուրույն հետազոտական մասի մինչև 20%, իսկ մագիստրոսական կրթական ծրագրում՝ 30%-ի ապահովումը:

2016 թ. կներդրվեն մագիստրոսական բարելավված ծրագրեր՝ բոլորն էլ համալսարանական. մագիստրոսական ծրագրերի տեսական դասընթացների որոշ մասը ևս ներառել է հետազոտական բաղադրիչ, ավելի մեծ տեղ է հատկացվել հետազոտության մեթոդներին:


Ծրագրերի վերջնարդյունքների համար համեմատություններ են կատարվել(բենչմարքինգ) ինչպես ռուսական, այնպես էլ եվրոպական կրթական տարածքում մշակված համանման ծրագրերի հետ:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի ժամանակ փորձագիտական եզրակացություն էր ներկայացվել բակալավրի երեք կրթական ծրագրի վերաբերյալ «Հայոց լեզու և գրականություն», «Մաթեմատիկա», «Իրավագիտություն»: Ինքնավերլուծության 3-րդ չափորոշիչը՝ «Մասնագիտական կրթական ծրագրեր», դրական է գնահատվել:

Մասնագիտական կրթական ծրագրերի բարելավման գործընթացը շարունակական է: 2015 թ.-ին լրամշակվել և ստեղծվել են հետևյալ կանոնակարգերը («Ուսանողների՝ գիտելիքների, կարողությունների, հմտությունների (կոմպետենցիաների) ստուգման-գնահատման միջոցների լրակազմի (ֆոնդի) ձևավորման», «Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական

գործընթացի կազմակերպման», «Բալային, ռեյթինգային համակարգով ուսանողների գիտելիքների ստուգման գնահատման համար հաշվառման»): Ընթացքի մեջ է դասընթացի կոմպետենցիայի անձնագրի մշակման ուղեցույցի մշակման աշխատանքը. վերջինս քննարկման կներկայացվի 2016 թ. մարտին:

**Ժամաքանակ և հաստիք:** Ուսանողների թվի անկումը հանգեցրել է ժամաքանակի, հետևաբար և հաստիքների թվի նվազման: Եթե 2014-2015 թթ. ժամաքանակը եղել է 181974, ապա 2015-2016-ին 175482 է: Ենթադրվում է, որ պետք է օգտագործվեր 175.2 հաստիք: Օգտագործվել է 179 հաստիք (160 հիմնական հաստիք և շուրջ 20000 ժամ ժամավճարային կարգով): 4 հաստիքի գերազանցումը պայմանավորված է «Երաժշտական գործ» մասնագիտության անհատական ժամերով, այլ կերպ ասած՝ գերաճախս չկա:



Պրոֆեսոր	9
Դոցենտ	86.6
Ասիստենտ	28.85
Դասախոս	35.6

Նկար 1. Հիմնական հաստիքների բաշխումը ըստ պաշտոնների պաշտոնավարման

19264 ժամ (միջինացված 19 հաստիք) օգտագործվելու է ժամավճարային հիմունքներով աշխատող դասախոսների կողմից (179 հաստիքի մեջ հաշվարկված է):

Ցավոտ է դառնում պրոֆեսորի և դոցենտի պաշտոնների համար օգտագործվող հաստիքների խնդիրը: Ռեսուրսների բաշխման տեսանկյունից հակասական իրողություն է նկատվում է. երիտասարդ կադրերի մասնագիտական աճը, կոչումի ձեռքբերումը առաջացնում է համապատասխան հաստիքի պաշտոնակալման սպասելիք, սակայն լսարանային ժամերի կրճատումը բերում է նշված պաշտոնների թվաքանակի նվազում: Օգտագործվել է պրոֆեսորի և դոցենտի 95.6 հաստիք 72.4-ի փոխարեն, շուրջ 21 հաստիքի գերազանցումը աշխատավարձի ֆոնդի համար սպառնալիք է:

Կրթական բարեփոխումների բնագավառի աշխատանքն ուղղված է համալսարանի ուսումնական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի (կարգեր, կանոնակարգեր, ուղեցույցներ և այլն) մշակմանը:

Կրթական վերջնարդյունքների (կոմպետենցիաների) վրա հիմնված կրթական չափորոշիչներին համապատասխանող կրթական ծրագրերի իրականացումը, ուսանողակենտրոն կրթության կազմակերպումը պահանջում են կատարել մի շարք փոփոխություններ ուսուցման գործընթացի կազմակերպման և անցկացման, ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման բնագավառում:

Այդ փոփոխությունների կանոնակարգման նպատակով կրթական բարեփոխումների բաժինը հաշվետու ժամանակահատվածում մշակել և հաստատման է ներկայացրել հետևյալ փաստաթղթերը.

1. «Կոմպետենցիաների վրա հիմնված ՎՊՀ կրթական ծրագրերի իրականացման ընթացքում կիրառվող գնահատման միջոցների ձևավորման և կիրառման ուղեցույց» (քննարկման փուլում է):

Այդ ուղեցույցի անհրաժեշտությունը պայմանավորված է, ուսանողների գիտելիքների ստուգման-գնահատման ավանդական միջոցներից բացի, այդ միջոցների նոր ձևերի կիրառման անհրաժեշտությամբ, որոնք թույլ կտան միանշանակ և ստույգ գնահատել ուսանողների գիտելիքները, կարողությունները, հմտությունները:

2. «Կանոնակարգ ուսանողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների (կոմպետենցիաների) ստուգման-գնահատման միջոցների լրակազմի ձևավորման» (ընդունվել է ՎՊՀ

գիտխորհրդի կողմից): Տվյալ կանոնակարգում ներկայացված են ստուգման-գնահատման միջոցների ձևավորման սկզբունքները և մոտեցումները՝ հաշվի առնելով յուրաքանչյուր դասընթացի առանձնահատկությունները, կիրառվող կրթական տեխնոլոգիաները, ուսանողների ինքնուրույն աշխատանքի ձևերը, ուսուցման վերջնարդյունքների առավելագույնս ստույգ և բազմապարփակ գնահատման գործիքները:

3. Ստուգման-գնահատման գործընթացների անբաժան մասն է ուսանողների գիտելիքների գնահատման արդյունքների բողոքարկումը: Այդ գործընթացը կարգավորելու նպատակով մշակվել է ուսանողների գիտելիքների գնահատման արդյունքների բողոքարկման կանոնակարգ, որը ներկայումս գտնվում է քննարկման փուլում:
4. Կազմվել են տարբեր առարկայական ծրագրերի իրականացման արդյունքում ձևավորվող կոմպետենցիաների անձնագրերի օրինակներ:

2015 թ. հունվար-մարտ ամիսներին կատարվել է «Գնահատման առանցքային ցուցանիշներ (2011-2015)» փաստաթղթի համար տվյալների հավաքագրում, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի գլխավորությամբ իրականացվել է այդ տվյալների վերլուծություն, կազմվել է համապատասխան փաստաթուղթ, որը թույլ է տալիս ամբողջական պատկերացում կազմել նշված ժամանակահատվածում համալսարանում իրականացված ուսումնական, ուսումնադաստիարակչական աշխատանքների, կրթական միջավայրի զարգացման, ուսումնական, նյութատեխնիկական բազայի, մարդկային ռեսուրսների առկա իրավիճակի, զարգացման հեռանկարների մասին:

Փաստաթղթում ներկայացված են վերոնշյալ ժամանակահատվածում Համալսարանի հետևյալ բնագավառներին վերաբերող փաստացի տվյալներ.

1. Ընդունելություն և լրակազմ
2. Ուսումնական գործընթաց
3. Ռեսուրսներ և կառավարում
4. Ենթակառուցվածքներ
5. Գիտություն և նորամուծություն
6. Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն:

5. Հաշվի առնելով համալսարանում գիտական գործունեության զարգացման անհրաժեշտությունը՝ համալսարանի ղեկավարությունը

որոշել է կիրառել խրախուսման մեխանիզմներ՝ երիտասարդ դասախոսների, աշխատակիցների գիտությամբ զբաղվելու մոտիվացիան բարձրացնելու համար: Այդ նպատակով մշակվել է «Վանաձորի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի երիտասարդ մասնագետների խրախուսման կանոնակարգ», որը գտնվում է քննարկման փուլում:


### ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ

2015 թ. կրթության որակի խնդիրը մեզ համար ն' հայեցակարգային էր, ն' ռազմավարական: Կրթական գործընթացում լուրջ տեղաշարժեր են կատարվում, արդիականացվում և բազմազան են դառնում թե՛ ուսուցման, թե՛ ուսումնառության մեթոդները:

ԱՌԻՓ-ների մեջ դրանք գտել են իրենց արտացոլումը, սակայն պետք է ընդգծել, որ ոչ բոլոր դեպքերում են դրանք ներդրվել: Ուսանողների առաջադիմությունը կարող է ուսուցման գործընթացի արդիականացման ձեռքբերման ցուցիչ լինել գործընթացների ճիշտ կազմակերպման դեպքում:

Առհասարակ 2014-2015 թթ. գարնանային քննաշրջանի արդյունքները (առանց պարտքերի մարման փուլերի) գոհացուցիչ են՝ 85%: Ուսանողության 16.8%-ը գերազանցիկ է, 30.6%-ը՝ հարվածային, 30.3%-ը սովորում է խառը, իսկ 9.2%-ը՝ միայն «բավարար» գնահատականներով:


Նախորդ ուսումնական տարվա համեմատությամբ ունենք հետևյալ ցուցանիշները.



Նկար 2. 2014-2015 թթ. գարնանային քննաշրջանի արդյունքները

Գծապատկերից երևում է, որ դրական տեղաշարժ է կատարվել բոլոր չափանիշներով. խառը գնահատականներով սովորողների և «անբավարար» գնահատված սովորողների տոկոսային հարաբերակցության նվազումը կատարվել է մյուս երկուսի հարաբերակցության բարձրացման օգտին:

Ըստ ֆակուլտետների՝ առաջադիմության պատկերն այսպիսին է.




Նկար 3. 2014-2015թթ. գարնանային քննաշրջանի արդյունքները՝ ըստ ֆակուլտետների

Բերված տվյալների մեջ ավարտական կուրսերի արդյունքները չեն արտահայտված:

Վճարովի համակարգից անվճար համակարգ փոխատեղման մրցույթն ուժեղ է հատկապես բանասիրական և պատմաաշխարհագրական ֆակուլտետներում:

Վճարովի համակարգում գերազանց առաջադիմություն ունեցողների համամասնությունն այսպիսին է (Նկար 4).


Մրցակցությունը փոխատեղման համար առկա է նաև մագիստրատուրայում. առաջին կուրսի վճարովի համակարգի սովորողների 23%-ը գերազանցիկ է, անվճար համակարգինը՝ 88%:



Նկար 4. 2014-2015թ գարնանային քննաշրջանի արդյունքները. գերազանց առաջադիմություն ունեցող ուսանողների թվաքանակի համամասնությունը (անվճար, անվճար)

Հեռակա ուսուցման համակարգի ուսանողության առաջադիմությունը 54% է (առանց պարտքերի մարման փուլերի). ուրախալի է, որ 10.7%-ը գերազանց և հարվածային առաջադիմություն է ցուցաբերում, սակայն ցավալի է 24.3%-ի միայն «բավարար» գնահատականներով սովորելը, մանավանդ, որ այդ թիվը իրականում ավելի է մեծանում պարտքերի մարումից հետո:

Ըստ կուրսերի՝ առաջադիմությունն ունի հետևյալ պատկերը.




Նկար 5. 2014-2015 թթ. գարնանային քննաշրջանի արդյունքները ըստ կուրսերի

Ըստ կուրսերի՝ առաջադիմության ցուցանիշի բարձրացումը թերևս ուսանողների ադապտացիոն փուլը հաղթահարելու մասին է խոսում:

Ավարտական որակավորման քննությունների արդյունքները համալսարանի կրթական գործընթացի որակի խոսուն ցուցիչներ են: 2015 թ. շրջանավարտ կուրսերը 2011 թ. կատարված ընդունելության արդյունքն էին: 2011 թ. հանրակրթությունը շրջանավարտներ չունեին: Ուսումնառության ընթացքում դա ակնառու էր. որակավորման քննությունների մասնակցության իրավունք ստացած 59 շրջանավարտների 49%-ը քննությունները հանձնել է «գերազանց» և «լավ» գնահատականներով:

Պատկերն այսպիսին է.






Նկար 6. Ավարտական որակավորման քննությունների արդյունքներն առկա ուսուցման համակարգում (բակալավրի կրթական ծրագիր)

Համալսարանը չի ավարտել 1 ուսանող, գերազանցության դիպլոմ են ստացել 4-ը :

Հեռակա ուսուցման համակարգի 27.7%-ը (100 ուսանող) չի հաղթահարել որակավորման քննությունները, գերազանցության դիպլոմ են ստացել 6 ուսանող (1.6%): Քննությունները հաղթահարած 258 ուսանողներից միայն «5» գնահատական են ստացել 16-ը (6.2%), «լավ»՝ 46-ը (17.8%): Պետք է նկատել, որ վերջին երկու ցուցանիշը վատ չէ. շուրջ 25% է կազմում:

Արդյունքները գոհացուցիչ են մագիստրատուրայի համակարգում: 129 մագիստրանտներից 105-ը (81.4%) ստացել են «գերազանց», իսկ 19-ը (14.7%)՝ «լավ» գնահատականներ, միայն 5 (3.9%) շրջանավարտ են գնահատվել «բավարար»:

Պատկերն այսպիսին է.



Նկար 7. Ավարտական որակավորման քննությունների արդյունքներն առկա ուսուցման համակարգում (մագիստրոսի կրթական ծրագիր)

Ուսման վճարի լրիվ փոխհատուցման գործընթացը (փոխատեղում) կազմակերպվել է առկա ուսուցման համակարգում ուսանողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների գնահատման բազմագործոնային համակարգի կիրառմամբ: Անվճար համակարգում սովորելու իրավունք են ստացել բակալավրի կրթական ծրագրով 2-4-րդ և մագիստրոսական կրթական ծրագրով 2-րդ կուրսերի՝ թվով 186 ուսանողներ: Անվճար սովորելու իրավունքը պահպանել են բակալավրի կրթական ծրագրի 2-րդ կուրսերի ուսանողների 55%-ը, 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողների՝ համապատասխանաբար 84% և 86,8%-ը:

## ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄ

2015 թ. առանձնակի ուշադրություն դարձվեց շարունակական կրթության կազմակերպման գործընթացին՝ որպես անձի ամբողջ կյանքի ընթացքում ձեռք բերած ուսումնառության արդյունքների համակարգի, որը հանգեցնում է անհատի գիտելիքների, հմտությունների, կարողությունների և արժեքային համակարգի կատարելագործմանը՝

միաժամանակ ապահովելով անհատի կողմից ուսումնառության ձևի ընտրության ճկունությունը, սոցիալական շարժունությունը, անհատական ակտիվ զարգացում և սոցիալականացման բարձր մակարդակ: Այդ նպատակով մարտ ամսին համալսարանի «Լրացուցիչ կրթության կենտրոնը» վերանվանվեց «Շարունակական (հարատև) կրթության կենտրոն»: Կենտրոնը, բացի ներքին շահառուների (պրոֆեսորադասախոսական և օժանդակ անձնակազմ) վերապատրաստումներից, նպատակ ունի կրթական ծառայություններ մատուցել հանրության տարբեր թիրախային խմբերի՝ նպաստելով.

- գործազուրկների կողմնորոշմանն աշխատաշուկայում
- աշխատանք ունեցող անձանց մասնագիտական որակավորման բարձրացմանը, վերապատրաստմանը,
- «վերադարձող ուսանողների» նեղ մասնագիտական հմտությունների, կարողությունների ձեռքբերմանը,
- սոցիալապես խոցելի խավերի և հատուկ կարիքներով մարդկանց (սահմանափակ կարողություններ ունեցող անձինք) կրթական գործընթացում ներգրավմանը և աշխատաշուկայում կողմնորոշմանը:

2015 թ. գիտխորհրդում հաստատվել է «Շարունակական կրթության իրականացման ռազմավարությունը»: Իրականացվել են դասընթացների կազմակերպման նախապատրաստական աշխատանքներ (ուսումնական պլան, ուսումնամեթոդական նյութեր) և գովազդ: Համալսարանների՝ որպես ցկյանս ուսումնառության հաստատությունների հատուկ դերի ամրապնդում (SSRULLI, TEMPUS) ծրագրի շրջանակներում մշակվել և 2016 թվականից կներդրվեն հետևյալ դասընթացները.

1. Մարդկային ռեսուրսների կառավարում
2. Անգլերեն լեզու
3. Նոր տեխնոլոգիաների կիրառումը հիմնական դպրոցում (կենսաբանության խնդիրների լուծման մեթոդիկա և գնահատում)
4. Գրասենյակային աշխատողներ:

**Շարունակական կրթության ապահովման նպատակով նախատեսվում են հետևյալ աշխատանքները՝**

- մշակված դասընթացների կազմակերպում,

- կարճաժամկետ վճարովի դասընթացների ավելացում, դրանց շարունակականության ապահովում,
- տարածաշրջանում համանման կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների հետ համագործակցություն,
- կարճաժամկետ ծրագրերի փորձի հիման վրա հեռավար կրթության պլանավորում,
- տարածաշրջանում շարունակական կրթություն ապահովող հաստատությունների շրջանում բուհի դերի բարձրացում:

2015 թ. կենտրոնը շարունակել է ներքին վերապատրաստումները և լեզվական կարողությունների զարգացման դասընթացները:

Համալսարանի աշխատակիցների վերապատրաստման դասընթացներին 2015թ. մասնակցել են 135 ունկնդիր, որոնցից ատեստավորումն անցել են 130-ը:

- Անգլերեն լեզու- 15 ունկնդիր
- Համակարգչային գրագիտություն-27 ունկնդիր
- Մանկավարժահոգեբանական պատրաստություն-54 ունկնդիր
- Իրավական պատրաստություն- 39 ունկնդիր

**Համալսարանի աշխատակիցների վերապատրաստման բնագավառում նախատեսվում են հետևյալ աշխատանքները՝**

1. համալսարանի աշխատակիցների վերապատրաստման դասընթացներում վարչական կազմի ներգրավում,
2. ունկնդրակազմի պահանջներին համապատասխան՝ վերապատրաստման ծրագրի կրթական կառուցամասի բովանդակության վերանայում,
3. ունկնդրակազմի կուտակած կրեդիտների մատչելիության ապահովում,
4. հետադարձ կապի ապահովման նպատակով որակական հարցման կազմակերպում:

**Լեզուների ուսուցման բնագավառում** շարունակական (հարատև) կրթության կենտրոնում կազմակերպվել են եռամսյա արագացված դասընթացներ 3 օտար լեզուներով (անգլերեն, ֆրանսերեն և ռուսերեն)՝ լեզվական տարբեր մակարդակներով:

Կենտրոնի կողմից առանձնահատուկ կարևորվել է լեզվական բարձր մակարդակի ապահովումը: Այդ նպատակով, ելնելով ունկնդիրների շարունակական պահանջարկից, առաջին անգամ ձևավորվել է B2 լեզվական մակարդակի խումբ:

Հաշվետու տարվա ընթացքում լեզուների ուսուցման դասընթացներին մասնակցել և վկայական է ստացել 117 ունկնդիր:

2015թ. առաջին կիսամյակում խոսակցական անգլերենի զարգացման նպատակով շարունակական կրթության կենտրոնի կողմից առաջին անգամ կազմակերպվել է անգլերենի ակումբ: Ակումբը վարում են բանասիրական ֆակուլտետի բարձր կուրսի ուսանողները:

**Լեզուների ուսուցման բնագավառում նախատեսվում են հետևյալ աշխատանքները՝**

1. անգլերենի ակումբի հանդիպումների հաճախականության ավելացում, այլ օտար լեզուներով ակումբների կազմակերպում,
  2. ավելի բարձր լեզվական մակարդակի դասընթացների կազմակերպում,
  3. օտար լեզուներով ժամանցային միջոցառումների ավելացում (ֆիլմի դիտում, կինո-սրճարան այցելություն, կարաոկե ակումբի կազմակերպում),
  4. հետադարձ կապի ապահովման նպատակով որակական հարցում,
  5. դասավանդող կազմի վերապատրաստում:
- Կազմակերպվել են եռամսյա դասընթացներ՝ 3 օտար լեզուներով (անգլերեն, ֆրանսերեն և ռուսերեն, Ա1-Բ1 մակարդակներ): Դասընթացներին մասնակցել են 59 ունկնդիրներ:
- Վերապատրաստումներին մասնակցել է 121 ունկնդիր.

1. անգլերեն լեզու - 15 ունկնդիր
2. համակարգչային գրագիտություն - 27 ունկնդիր
3. իրավագիտական պատրաստություն – 39 ունկնդիր
4. մանկավարժահոգեբանական պատրաստություն - 40 ունկնդիր

**ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**

Այսօրվա համալսարաններից պահանջվում է նպաստել բարձրագույն կրթության որակին, հետազոտական և նորարարական գործունեությանը: Ուստի և համալսարանում ձեռնարկվում են առանձին քայլեր գիտությունը համալսարանի գործունեության հիմնական բաղադրիչներից մեկը դարձնելու ուղղությամբ: 2016 թ. համալսարանի սեփական միջոցներից 38,500.0 մլն դրամ է նախատեսվում գիտական հետազոտությունների համար (բյուջեի 5%-ը), դրանից բացի, աշխատավարձի 22.2%-ը համարվում է գիտական գործունեության

Ֆինասանվորում: Նախատեսվում է գումարներ տրամադրել ներբուհական դրամաշնորհներին, գիտական գործուղումներին, աշխատակիցների աշխատությունների տպագրությանը և այլն: Դրանք կնպաստեն նպատակաուղղված հետազոտություններ կատարելուն:

2015 թ. հունվարին գիտխորհրդում հաստատվել են համալսարանի գիտության զարգացման գերակայությունները և գիտության ոլորտի քարեփոխումների հայեցակարգային դրույթները:

2015 թվականից ԲՈՂ-ի՝ ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում ընդգրկվել է նաև «Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիրը», որի երկու պրակներն արդեն տպագրվել են: Դրանցում տեղ են գտել ՎՊՀ 58, այլ բուհերի 11, ՎՊՀ հենակետային վարժարանի 2 աշխատակիցների և 12 ուսանողների 62 հոդվածներ:

Ապրիլի 19-ին անցկացվել են ներբուհական ընթերցումներ՝ նվիրված Ցեղասպանության 100-րդ տարելիցին:

Նոյեմբերի 4-5-ը անցկացվել է միջազգային գիտաժողով՝ նվիրված Մ. Աբեղյանի ծննդյան 150-ամյակին, որին մասնակցել են 5 գիտնականներ արտասահմանից (Ռուսաստան, Կանադա, Ավստրիա, Սլովակիա), 9-ը՝ Արցախից, 35-ը՝ Հայաստանից (որոնցից 11-ը՝ ՎՊՀ-ից):

Համալսարանի պատմության մեջ առաջին անգամ գիտաժողովին և պարբերականին ներկայացված հոդվածները ստուգվել են գրագողությունը հայտնաբերող ծրագրով: Արդյունքում 8 աշխատանքի տպագրություն արգելվել է դրանցում գրագողության փաստեր հայտնաբերվելու պատճառով:

2015 թ. ստացվել է գիտաժողովների մասնակցության 30 հրավեր, որոնցից 12-ը՝ հանրապետական, 11-ը՝ միջազգային, 7-ը՝ ուսանողական: Հանրապետական գիտաժողովներին մասնակցել է 20 դասախոս, միջազգային գիտաժողովներին՝ 10: Գիտաժողովներին մասնակցած դասախոսներին, ըստ գործող կարգի, տրամադրվել է ճանապարհածախս (այդ թվում և նրանց, ովքեր գիտաժողովների են մասնակցել արտասահմանում):

Ուսանողական գիտական ընկերությունը մայիսին կազմակերպել է Հայրենական մեծ պատերազմի 70-ամյակին նվիրված գիտաժողով, որին մասնակցել են ուսանողներ Հայաստանի 8 բուհերից և 6 ուսանող՝ Արցախից: Այս գիտաժողովի նյութերը նույնպես ստուգվել են գրագողությունը կանխելու նպատակով, որի հետևանքով 5 աշխատանք տպագրության չի երաշխավորվել (3-ը՝ ՎՊՀ-ից, 2-ը՝ այլ բուհերից):

Համալսարանի ուսանողները մասնակցել են նաև ՌԻԳԸ գիտաժողովների Արցախում, ԵՊՀ-ում և ԳՊՄԻ-ում (31 ուսանող): Սակայն որոշ ուսանողների աշխատանքներ տպագրության չեն երաշխավորվել:

Ինչպես գիտենք, համալսարանն ասպիրանտուրայի ձևով կադրեր պատրաստելու իրավունք ունի 12 մասնագիտություններից, ատենախոսության թեմա հաստատելու իրավունք՝ 5-ից և ևս 5 մասնագիտություններից՝ որակավորման մասնագիտական քննություն անցկացնելու իրավունք: 2015 թ. սեպտեմբերից ՎՊՀ-ն ունի 6 հայցորդ (հայոց լեզու՝ 1, մաթեմատիկա՝ 1, կենսաբանություն՝ 1, ռուսաց լեզու՝ 2, մանկավարժություն՝ 1):

Հաշվետու ժամանակահատվածում դիմել ենք ԿԳՆ-ին «Էկոլոգիա» մասնագիտությունից ասպիրանտուրայի ձևով գիտական կադրեր պատրաստելու իրավունք ստանալու համար, իսկ «Մանկավարժության տեսություն և պատմություն» և «Բուսաբանություն» առարկաներից՝ ատենախոսության թեմա հաստատելու համար:

Այս տարի համալսարանի աշխատակիցների կողմից հրատարակվել է 144 հոդված, 4 ուսումնամեթոդական աշխատանք, 6 մենագրություն:


Գիտխորհրդի կողմից հրատարակության է երաշխավորվել ևս 9 աշխատանք:

Ըստ ամբիոնների՝ 2015-ին կատարված գիտահետազոտական աշխատանքների վիճակագրությունը հետևյալն է.

*Աղյուսակ 5. 2015 թվականին հրատարակված գիտական աշխատանքների քանակն ըստ ամբիոնների*

h/h	Ամբիոնի անվանումը	Թեզիս	Հոդված	Ուսումնամեթոդական աշխատանք	Մենագրություն, բառարան	Դասագիրք
1.	Հայոց լեզվի	-	16	1	1	-
2.	Գրականության	-	17	-	1	-
3.	Մանկավարժության	-	18	-	1	-
4.	Հոգեբանության և սոցիոլոգիայի	-	11	-	-	-
5.	Օտար լեզուների	-	3	-	-	-
6.	Ռուսաց լեզվի	-	7	-	-	-

7.	Պատմության	-	9	-	2	-
8.	Տնտեսագիտության տեսության	-	7	1	-	-
9.	Փիլիսոփայության և քաղաքագիտության	-	6	1	-	-
10.	Կենսաբանության	-	3	-	-	-
11.	Քիմիայի	-	10	-	-	-
12.	Մաթեմատիկայի	-	2	1	-	-
13.	Ինֆորմատիկայի և տնտեսագիտամաթեմատիկական մեթոդների և մոդելավորման	-	2	-	-	-
14.	Ֆիզիկայի	-	6	-	-	-
15.	Ընդհանուր ֆիզիկական դաստիարակության և արտակարգ իրավիճակների հիմնահարցերի	-	2	-	1	-
16.	Արվեստի	-	25 ստեղ. աշխ.	-	-	-
<b>Ընդամենը</b>		<b>0</b>	<b>144</b>	<b>4</b>	<b>6</b>	<b>-</b>




Նկար 8. 2012-2015 թթ. հրատարակված գիտական աշխատանքների քանակը

2015 թ. գիտությունների դոկտորի գիտական աստիճան է ստացել 1 աշխատակից (2014 թ.՝ 0), գիտությունների թեկնածուի աստիճան՝ 5 աշխատակից (2014 թ.՝ 9), իսկ 1 դոկտորական թեզ պաշտպանվել է սեպտեմբեր, թեկնածուական 1 թեզ՝ նոյեմբեր ամսին:



2015 թվականին համալսարանի գիտխորհրդի կողմից դոցենտի գիտական աստիճան է շնորհվել 9 աշխատակցի (2014 թ.՝ 5):

Համալսարանի գիտական խորհուրդը քննարկել և դրական կարծիքով ԲՈՀ է առաքել ևս 2 աշխատակիցների՝ դոցենտի գիտական կոչման հայցադիմումները:



Նկար 9. 2012-2015 թթ. դասախոսների համակազմը՝ ըստ ստացած գիտական աստիճանների և կոչումների

Չնայած հաշվետու տարում գիտահետազոտական գործունեության բնագավառում արձանագրված ձեռքբերումներին՝ դեռևս առկա են մի շարք խնդիրներ, որոնցից են՝

- գործատուների հետ համագործակցության և գիտական հետազոտությունների արդյունքների առևտրայնացման բացակայությունը,
- ասպիրանտների (հայցորդների) փոքր թվաքանակը,
- մենագրությունների, դասագրքերի և ուսումնական ձեռնակների սակավաթիվ լինելը (նախորդ տարիների համեմատությամբ դրանց թիվը նվազել է),
- արտասահմանյան առաջատար պարբերականներում գիտական հրապարակումների փոքր թիվը,
- ըստ ամբիոնների՝ գիտական հրապարակումների անհամաչափ բաշխվածությունը,

- գիտաժողովներին, գիտական սեմինարներին ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի անհամաչափ մասնակցությունը,
- հետազոտությունների ֆինանսական աղբյուրների բազմազանեցված չլինելը:

Ուսումնական գործընթացին զուգահեռ ուսանողները հետազոտական գործունեություն կարող են իրականացնել նաև **Ուսանողական գիտահետազոտական ընկերության** աշխատանքների շրջանակներում:

2014-2015թթ. ՎՊՀ-ն ստացել է ուսանողական գիտական ընկերության նստաշրջանների մասնակցության 4 հրավեր. 1-ը՝ ԱրՊՀ-ից, 1-ը՝ ԳՊՄԻ-ից, 2-ը՝ ԵՊՀ-ից: Այդ գիտաժողովներին մեր համալսարանից մասնակցել է 46 ուսանող:

2015 թ. օգոստոսի 10-23-ը 6 ուսանողներ և մեկ դասախոս մասնակցել են Ավստրիայի գիտությունների ակադեմիայի իրանագիտության ինստիտուտի գիտաշխատող Հրաչ Մարտիրոսյանի կողմից կազմակերպած հայագիտական ամառային դասընթացին:

ՈւԳԸ աշխատանքները բարելավելու համար նախատեսվում է կազմակերպել՝

- ա) առարկայական օլիմպիադաներ ինչպես մասնագիտական, այնպես էլ ոչ մասնագիտական բաժիններում,
- բ) սեմինարներ՝ «Ինչպե՞ս գրել գիտական աշխատանք» թեմայով,
- գ) գիտաժողովներ՝ միջբուհական կապերի ամրապնդման համար, ինչպես նաև մասնակցություն այլ բուհերի ՈւԳԸ գիտաժողովներին,
- դ) ամառային դպրոց:

ՎՊՀ ՈւԳԸ-ն այժմ ձեռնարկում է ուսանողական գիտական նստաշրջանների նյութերի տպագրումը. կատարվում են համապատասխան ամբիոնների կողմից երաշխավորված հոդվածների սրբագրման և խմբագրման աշխատանքները: Հոդվածներն ուսումնասիրվում են գրագողությունը հայտնաբերող ծրագրերով՝ բացառելով արդեն տպագրված հոդվածների տպագրությունը:

ՎՊՀ ՈւԳԸ-ն նպատակ ունի ուսանողական գիտական հերթական նստաշրջան հրավիրել 2016 թ. աշնանը:

## ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Որակի ապահովման կենտրոնի աշխատանքները հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել են ըստ Համալսարանի ռազմավարական առաջնահերթությունների.

- Կրթական ծառայություններ
- Կադրերի զարգացում
- Որակի ապահովում
- Գիտահետազոտական գործունեություն

Նշված խնդիրների լուծման ընթացքում նպատակ է հետապնդվել.

- կատարելագործել որակի ապահովման համակարգը.
- բարելավել ծրագրերի մշակման և իրականացման գործընթացները.
- ուսումնասիրել և վերանայել որակի կառավարման համակարգը:

Առանցքային տեղ են զբաղեցրել այն աշխատանքները, որոնք ուղղված էին բուհի արտաքին ճանաչմանը, մասնավորապես.

- Համալսարանի հավատարմագրման գործընթացը,
- «Կրթության կառավարում» ՄԿԾ-ի փորձաքննությունը:

**Կրթական ծառայությունների և որակի ապահովման ուղղությամբ կատարվող աշխատանքները.** Կրթական ծառայությունների որակի բազմակողմանի ուսումնասիրություն և վերլուծություն մոնիթորինգի և աուդիտի միջոցով:

Շարունակվել են «ՄԱՀԱԹՄԱ (ՏԵՄՊՈՒՄ)» ծրագրի շրջանակներում «Կրթության կառավարում» մագիստրոսական կրթական ծրագրի փորձաքննության նախապատրաստական աշխատանքները: Համակարգվել և համալսարանի կայքէջում տեղադրվել է երկու մասից բաղկացած տեղեկագիրք, որի առաջին մասում ներկայացված են ծրագրի մշակման մեթոդաբանությունը, նախապատմությունը, կարիքների վերհանման մեխանիզմները, ծրագրի ռազմավարության մշակման բոլոր քայլերը և ռիսկերը: Տեղեկագրքի երկրորդ մասում ներկայացված են մոդուլները՝ վերջնաբեռնվածքով և գնահատման համակարգով: Ըստ էության՝ տեղեկագրքի առաջին մասը ուղեցույց է դասախոսների և ծրագիրը մշակող խմբի համար, իսկ երկրորդ մասը՝ ուսանողների: «Կրթության կառավարում» մագիստրոսական կրթական ծրագրի մշակման ռազմավարությունը դրական փորձ է համալսարանի կրթական ծրագրերի վերանայման գործընթացում՝ որակի ապահովման սկզբունքներով վերամշակման նպատակով: Առաջ անցնելով նշենք նաև, որ փորձագիտական խումբն այցելել է համալսարանի հունիս ամսին, և

փորձագետները դրական են գնահատել այս ուղղությամբ իրականացված աշխատանքները: ՄԿԾ-ի առաջին շրջափուլն ավարտված է: Փորձնական ծրագրի ընթացքի և արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ չնայած ընտրած ճանապարհը տանում է դեպի զարգացում, այնուամենայնիվ, պետք է վերանայվեն ծրագրի մոդուլները, վերջնարդյունքները՝ փոփոխվող շուկայական պահանջներին հարմարեցման նպատակով:

Սույն ծրագրի շրջանակներում Բաթումի Շ. Ռուսթավելու անվան պետական համալսարանի երեք ուսանող երկու շաբաթով այցելեց ՎՊՀ և մասնակցեց երկու դասընթացների: Փոխադարձ այցերը հնարավորություն տվեցին վեր հանել միջազգայնացմանն ուղղված բուհի կողմից որդեգրած քայլերի արդյունավետությունը: Նման փոխանակումները, երբ կրթական ծրագրերի վերջնարդյունքները համահունչ են, հնարավորություն են տալիս լիարժեք կազմակերպել ուսանողների շարժունությունը կրեդիտների փոխանցումով: Շարժունության մեխանիզմները բուհում հիմնականում գործում են միջազգային ծրագրերի շրջանակներում այն դեպքում, երբ այս ծրագիրը հնարավորություն է տալիս համագործակցության դաշտն ընդլայնել և ներդնել ոչ միայն ուսանողների, այլև դասախոսների ու հետազոտության մակարդակներում:

Ներկայումս նախապատրաստական աշխատանքներ են տարվում քննարկման ներկայացնել «Կրթության կառավարում» մասնագիտական կրթական ծրագրի բարելավման ծրագիրը՝ ընդգրկելով շահագրգիռ բոլոր կողմերին:

Հոկտեմբեր ամսին իրականացվել է նաև «Կրթության կառավարում» մասնագիտական կրթական ծրագրի արտաքին մոնիթորինգ Հայաստանում «ԷԲԱԶՄՈՒՍ+» ծրագրի ազգային գրասենյակի կողմից:

Կենտրոնն անմիջական մասնակցություն է ունեցել ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի նախապատրաստմանը: ՈԱԿ-ը համակարգել և աջակցել է համալսարանի ինքնավերլուծության զեկույցի պատրաստմանը և ՈԱԱԿ ներկայացմանը: Ջեկույցը ներկայացվել է փետրվարին, իսկ հոկտեմբերին, փորձագիտական գնահատման արդյունքում, համալսարանը հավատարմագրվել է չորս տարվա ժամկետով:

Համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների նման գնահատումը ոչ միայն որակի արտաքին գնահատման, այլև կառավարման և կրթական ծրագրերի բարելավման հնարավորություն է:

Բուհի համար դա նշանակում է, որ առկա է համապատասխան ներուժ, և կարելի է շարունակաբար կատարելագործել աշխատանքները միջազգայնացման ճանապարհին: Սակայն կան նաև լուրջ խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ են նյութական, մարդկային, ֆինանսական ներդրումներ:

Փորձագիտական խմբի կողմից ներկայացված առաջարկությունները հիմք հանդիսացան բուհի ռազմավարության վերանայման և բարելավման ծրագրի մշակման համար:

ՈԱԿ-ը աջակցել է համալսարանի բարելավման ծրագրի մշակմանը, որը դեկտեմբերին ներկայացվել է ՈԱԱԿ:

2015-2018 թթ. ՎՊՀ-ի բարելավման ծրագրում (միջնաժամկետ) ներկայացված են բուհի առաքելությունից բխող բոլոր քայլերը, որոնք կարող են տանել դեպի զարգացում: Ծրագիրը կառուցվել է փորձագիտական խմբի կողմից արված առաջարկությունների ուսումնասիրության հիման վրա:

**Կադրերի զարգացում և որակի ապահովում.** հաշվետու ժամանակահատվածում ՈԱԿ-ի կողմից իրականացվել են մի շարք մշտադիտարկումներ և աուդիտ, որոնք ուղղված էին կրթական կարիքների վերհանմանը և առավել խոցելի խնդիրների բացահայտմանը, ինչպես նաև գործընթացների բարելավմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:

Մասնավորապես՝

- իրականացվել է կառավարման համակարգի և վարչատնտեսական գործունեության կատարելագործմանն ուղղված աշխատանքների ուսումնասիրություն: Արդյունքում վերհանվել են մի շարք խնդիրներ, որոնց լուծումը կնպաստի կառավարման համակարգի և դրանց ՈԱ մեխանիզմների կատարելագործմանը:

Ուսումնասիրության արդյունքների հիման վրա ներկայացվել են առաջարկներ, որոնք հիմնականում ուղղված են գրադարանի, կաբինետների, լաբորատորիաների աշխատանքների կատարելագործմանը և կրթական միջավայրը խոցելի դարձնող խնդիրներին՝ ճաշարանի, հանրակացարանի, հանգստյան գոտիների բացակայություն և այլն: Այս ուղղությամբ արդեն ձեռնարկված են քայլեր:

- նախատեսված կրթական ծրագրերի բարելավման ծրագրերի մշտադիտարկումը և աուդիտը իրականացվել են հոկտեմբեր – դեկտեմբեր ամիսներին, ինչը կապված էր կրթական

գործունեության ռազմավարության բարելավման ծրագրի վերանայման հետ: Այդ գործընթացը դեռևս ավարտված չէ:

- կրթական ծրագրերի նյութատեխնիկական սպասարկման և կարիքների վերհանման գործընթացների մշտադիտարկումը ցույց տվեց, որ չնայած գործող կարգին՝ ընթացակարգերի բացակայության հետևանքով որոշ ամբիոնների կողմից ներկայացված հայտը չի բխում կրթական ծրագրերի պահանջներից, այլ ուղղված է ամբիոնների գործունեության ապահովմանը:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է մարդկային ռեսուրսների կառավարման աուդիտ: Արդյունքները ներկայացվել են գիտխորհրդին, և ընդունվել է որոշում ներկայացված առաջարկությունները իրագործելու վերաբերյալ:

ՈԱԿ-ի աշխատանքների մյուս ուղղությունը *վերապատրաստումների* կազմակերպումը, *իրազեկվածության* բարձրացումը և *տեղեկատվության* տրամադրումն է:

- առաջին կուրսի ուսանողներին տեղեկատվություն է տրամադրվել կրթական համակարգի և ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման վերաբերյալ: Կազմակերպվել է 9 վերապատրաստում, որին մասնակցել է թվով 126 ուսանող:

- առաջին կուրսի ուսանողներին տեղեկատվություն է տրամադրվել նոր կրթական միջավայրի և Բոլոնյան կրթական համակարգի կառուցվածքի վերաբերյալ: Կազմակերպվել է 20 վերապատրաստում, որին մասնակցել է 211 ուսանող:

Տարվա ընթացքում կազմակերպվել է 29 վերապատրաստում, որին մասնակցել է 337 ուսանող:

Բոլոր ֆակուլտետներին կից գործող որակի ապահովման աշխատանքային խմբերի համար պարբերաբար կազմակերպվել են խորհրդատվություններ, քննարկումներ, վերապատրաստումներ, որոնք ուղղված են որակի ապահովման գործընթացների համակարգմանն ու արդյունավետության բարձրացմանը ֆակուլտետներում, ամբիոններում: Ընդհանուր առմամբ՝ իրականացվել է 14 վերապատրաստում, որին մասնակցել են 132 ուսանող և դասախոս: Որակի ապահովման ֆակուլտետային աշխատախմբերի կողմից ամբողջ տարվա ընթացքում բոլոր ստորաբաժանումներին տրամադրվել է մասնագիտական խորհրդատվություն: Հունվար – նոյեմբեր ամիսներին իրականացվել են 21 թիմային վերապատրաստում, խորհրդատվություն, որին մասնակցել են դասախոսներ, վարչական աշխատողներ և ուսանողներ:

**Գիտահետազոտական գործունեություն և որակի ապահովում**

Կարևորելով պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների մասնակցությունը հետազոտական գործունեության կազմակերպման և իրականացման գործընթացներում՝ ՈԱԿ-ի կողմից նախաձեռնվել է մշտադիտարկում, որը ցույց է տվել, որ դեռևս չեն գործում առկա կարիքների վերհանման հստակ մեխանիզմներ, մոտեցումներ և միասնական ծրագրեր: Կարիք կա նաև մշակելու համապատասխան քաղաքականություն:

*Դասախոս – որակի ապահովում*

- իրականացվել է երիտասարդ մասնագետների աջակցման և խրախուսման քաղաքականության ուսումնասիրության վերաբերյալ քննարկում: Քննարկմանը մասնակցել են համալսարանի երիտասարդ կադրերը՝ դասախոսներ, վարչական աշխատողներ: Ուսումնասիրությունների արդյունքում վերհանված խնդիրները ներկայացվել են բուհի կառավարման մարմիններին: Ընդունվել է որոշում երիտասարդ մասնագետների աջակցման և խրախուսման մեխանիզմների վերանայման վերաբերյալ:

*Ուսանող- որակի ապահովում*

Ձեռք է բերվել պայմանավորվածություն ուսանողական խորհրդի հետ համագործակցության վերաբերյալ: Համատեղ քննարկումների արդյունքում վերհանվել են այն ուղղությունները, որոնցում համագործակցությունը կնպաստի ուսանողների կարիքների վերհանմանը և կրթական միջավայրի բարելավմանը:

Հունվարին գիտխորհրդի կողմից հաստատվել է որակի ապահովման համակարգի ներդրմանն ու կատարելագործմանն ուղղված նոր փաստաթղթերի փաթեթ, որում ներկայացված են որակի ապահովման համակարգի գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերը՝ որակի ապահովման կանոնակարգը, հայեցակարգը, որակի կառավարման կանոնակարգը, մշտադիտարկման և աուդիտի կանոնակարգերը և ընթացակարգերը:

Որակի ապահովման քաղաքականության վերանայման արդյունքում առաջացավ որակի ապահովման նոր ձեռնարկի մշակման և հրապարակման խնդիրը: Որակի ապահովման Ձեռնարկը դեկտեմբեր ամսին հանձնվել է հրատարակման:

Որակի կառավարումը հաշվետու ժամանակաշրջանում որակի ապահովման կենտրոնի աշխատանքների կարևոր ուղղություններից է եղել: Այն կազմակերպվել և իրականացվել է համալսարանի ղեկավարության, ֆակուլտետների, ամբիոնների և մյուս

ստորաբաժանումների հետ համագործակցությամբ: Մշտադիտարկվել և ուսումնասիրվել են համալսարանի ստորաբաժանումների կողմից որակի ապահովմանն ուղղված ինքնավերլուծության և ինքնագնահատման գործընթացները, որակի կառավարման ներկա վիճակը և պարբերական խորհրդատվությունների ու քննարկումների միջոցով դրանք ուղղորդվել են համալսարանի քաղաքականության քարտեզավմանը որակի կառավարման բնագավառում:

Այնուամենայնիվ, այս բնագավառում անելիքներ շատ կան, մասնավորապես առաջնահերթ են.

- Դասախոսների, ուսանողների և վարչական անձնակազմի իրազեկվածության մակարդակի բարձրացում որակի կառավարման վերաբերյալ և խորհրդատվությունների տրամադրում, վերապատրաստումների ծրագրերի իրականացում որակի կառավարման մշակույթի զարգացման նպատակով:
- Ներքին և արտաքին շահառուների ներգրավվածության ընդլայնում որակի կառավարման գործընթացներում հետադարձ կապի ապահովման նպատակով:
- Ստորաբաժանումներում որակի կառավարման մեթոդների, ուսումնական գործընթացի մեթոդական, տեղեկատվական և նյութատեխնիկական ռեսուրսների գնահատման չափանիշների ներդրում:
- Որակի կառավարման համակարգի այնպիսի մոդելի ներդրում, որը կապահովի համակարգի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը բոլոր մակարդակներում:

Ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու և շրջանավարտներից հետադարձ կապ ստանալու նպատակով տարեսկզբին՝ որպես կառուցվածքային ստորաբաժանում, «Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը» վերանվանվել է **«Շրջանավարտների և կարիերայի աջակցման կենտրոն»**, որի վերամշակված կանոնադրությունն ու ռազմավարությունը հաստատվել են ՎՊՀ գիտական խորհրդի 25.05.2015 թ. նիստում:

Համաձայն կենտրոնի աշխատանքային պլանի՝ մշտական կապ է պահպանվել ՎիվաՄԷլ-ՄՏՍ կազմակերպության հետ. վերակնքվել են բարձր առաջադիմությամբ ուսանողների պայմանագրերը, ըստ որոնց՝ որոշ սոցիալական խմբերի ուսանողների (ծնողագուրկ, հաշմանդամ,



սոցիալապես անապահով) փոխհատուցվում է ուսման վարձի մի մասը : Ընդ որում՝ ծրագրին մասնակցած, բայց արդեն ուսումնառությունն ավարտած երկու ուսանողի փոխարեն ներգրավվել է չորսը: Ընդհանուր առմամբ «Կրթական ֆոնդ» ծրագրում ներառված է ՎՊՀ 44 ուսանող:

Կենտրոնի կողմից անցկացվել են երկու լայնածավալ հետազոտություններ:

Առաջին հետազոտությունն իրականացվել է Լոռու մարզի 56 գործատու կազմակերպությունների շրջանում և ներառել է թե՛ կրթության, թե՛ արտադրության, թե՛ առևտրի ոլորտները: Հետազոտության հիմնական նպատակն եղել է պարզել մարզում առկա մասնագետների պահանջարկը՝ ըստ ոլորտների և ըստ այդ մասնագետներին ներկայացվող մասնագիտական պահանջների: Հարցմանը մասնակից հիմնարկ-ձեռնարկությունների ներկայացուցիչներն ընդգծել են նոր մասնագիտությունների ներդրման կարևորությունը:

Երկրորդը մարզում առկա մասնագետների պահանջարկի և ՎՊՀ շրջանավարտների մասնագիտական պահանջների համադրական վերլուծությունն է: Հետազոտությունը նպատակ է հետապնդել պարզելու մեր շրջանավարտների պահանջարկը մարզի ներկայիս աշխատաշուկայում: Հետազոտությունն անդրադարձել է մարզի աշխատանքի շուկայում մեր թողարկած մասնագետների ինտեգրման, կրթական ծրագրերի և շուկայում պահանջարկված մասնագետների աշխատանքի նկարագրերի համադրման, աշխատաշուկայի վրա արտագաղթի և տնտեսական ճգնաժամի հետևանքների, բարձրագույն կրթության նկատմամբ պահանջարկի ավելացման և շուկայի պահանջարկի նվազման, կենսաթոշակային տարիքի աշխատող մասնագետների և երիտասարդների շրջանում գործազրկության բարձր մակարդակի խնդիրներին:

Ուսումնասիրվել են մարզում և հանրապետությունում աշխատանքի հայտարարություններ տարածող հայտնի կայքեր ու տպագիր մամուլը: Վերլուծության ընթացքում դիտարկվել է 274 հայտարարություն-հայտ, որը ներառել է տնտեսության 24 ոլորտ և 114 մասնագիտություններ:

Այս տարի ևս հարցախույզ է անցկացվել շրջանավարտների շրջանում՝ ՎՊՀ-ում ստացած կրթության վերաբերյալ: Հարցմանը մասնակցել է բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի առկա և հեռակա ուսուցմամբ 300 շրջանավարտ: Հետազոտության արդյունքները ենթարկվել են վերլուծության և համադրվել նախորդ տարիների

հետազոտությունների հետ: Վերլուծության հիման վրա կազմվել է առաջարկությունների ցանկ, որը լրամշակվելուց հետո ներկայացվելու է ՎՊՀ ֆակուլտետների խորհուրդների քննարկմանը:

Պարբերաբար անցկացվել են հանդիպումներ տարբեր ֆակուլտետների ուսանողների, կուրսերի ավագների հետ: Անցկացվել են սեմինար վերապատրաստումներ ուսանողների և շրջանավարտների համար. տրամադրվել է թարմ տեղեկատվություն առկա թափուր աշխատատեղերի վերաբերյալ, աջակցություն է ցուցաբերվել ռեզյումեների կազմման և հարցազրույցների մասնակցության հարցերում:

Համագործակցության շրջանակներում կենտրոնը «Կրթություն Հայաստան» կազմակերպության հետ համատեղ իրականացրել է տեղեկատվական սեմինարներ Վանաձորի «Օրբան» կենտրոնում և Վանաձորի պետական համալսարանում: Ծրագրին մասնակցել են ՎՊՀ մեծ թվով շրջանավարտներ և ավարտական կուրսերի ուսանողներ, որոնք ընտրական փուլից հետո վերապատրաստում են անցել Դիլիջանի միջազգային դպրոցում: Ծրագրի բոլոր փուլերը հաղթահարած մասնակիցներն արդեն իսկ երկու տարի ժամակետով պայմանագրով աշխատում են Լոռու, Տավուշի, Արագածոտնի մարզերի տարբեր ուսումնական հաստատություններում:

Ինտեկոբանկի երևանյան գրասենյակի հետ համատեղ իրականացվել է շրջանավարտների հավաքագրում «Ինտեկոթիմը ես եմ» աշխատանքային թիմի ձևավորման համար: Ծրագրի առցանց բազայում գրանցվել են ՎՊՀ մեկ տասնյակից ավելի շրջանավարտներ հարակից մասնագիտական ոլորտներից:

Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարանի կարիերայի կենտրոնի և Վիլնյուսի պետական համալսարանի հետ համատեղ կարիերայի կենտրոնների առցանց բազաների ստեղծման հայտ է ներկայացվել ERASMUS PLUS ծրագրին:

Առկա է ՎՊՀ վերջին երեք տարիների շրջանավարտների բազա, համալրման փուլում է շրջանավարտների ռեզյումեների բազան:

Առաջիկայում նախատեսվում է առցանց գրանցում կենտրոնի պաշտոնական կայքում՝ հատկապես շրջանավարտների համար:

## ՔՈՒԵՁ

Քուլեջում կրթությունը իրականացվում է հետևյալ մասնագիտությունների գծով՝ «Թարգմանություն և գործավարություն»

(9-ամյա կրթության հիմքով 4 տարի տևողությամբ, 12-ամյա կրթության հիմքով 3 տարի տևողությամբ), «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտությամբ (9-ամյա կրթության հիմքով 4 տարի տևողությամբ, 12-ամյա կրթության հիմքով 3 տարի տևողությամբ), «Սպասարկման կազմակերպում» (12-ամյա կրթության հիմքով 3 տարի տևողությամբ):

2015 թ. առաջին անգամ կատարվել է ընդունելություն հեռակա «Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ» մասնագիտությամբ :

Ներկայումս քոլեջում սովորում է 97 ուսանող:

Հաշվետու տարվա ընթացքում առաջին անգամ ունեցել ենք «Թարգմանություն և գործավարություն» մասնագիտության թվով 19 շրջանավարտներ, որոնցից 5-ը ստացել են գերազանցության դիպլոմ: Քոլեջի 5 շրջանավարտներ շարունակել են իրենց ուսումնառությունը համալսարանի «Օտար լեզու և գրականություն» մասնագիտության երկրորդ կուրսից:

Ուսանողները կազմակերպել են վիկտորինաներ, «Համակարգիչը մեր կյանքում», «Հայկական ավանդույթները», «Բաժնետերերի ժողով», «Բրիտանիայի խոշոր քաղաքները» «Ջեյն Էյր», «Սպորտլանդիա, համանուններ և հարանուններ», «Աշխատանք օպերացիոն համակարգի ստանդարտ ծրագրերով», «Ժպիտի միջազգային օրվան նվիրված բաց դաս», «Աշխարհի լավագույն ֆիլմի մրցանակաբաշխություն» միջոցառումներ:

### ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Ներկայումս վարժարանն ունի 343 աշակերտ: Զգալի աշխատանքներ են կատարվել վարժարանում ուսուցման որակի բարձրացման ուղղությամբ: Այս գործին էականորեն նպաստել է այն հանգամանքը, որ համալսարանի 4 դասախոսներ տարիներ շարունակ դասավանդում են հենակետային վարժարանում: Տարվա ընթացքում 6 ուսուցիչ անցել է վերապատրաստում, այսպիսով վերապատրաստված ուսուցիչների թիվը հասել է 21-ի: Երկու ուսուցիչներ այս տարի ստացել են ուսուցչի որակավորման առաջին տարակարգ: Ներկայումս հենակետային վարժարանում աշխատում են գիտության 8 թեկնածուներ:

Անցած ուսումնական տարին վարժարանի 10 աշակերտներ ուսումնական տարին ամփոփել են գերազանց, 85-ը՝ հարվածային առաջադիմությամբ: Մեկ աշակերտ ստացել է գերազանցության մեդալ: Վարժարանի 50 աշակերտներ մասնակցել են առարկայական

օլիմպիադաների քաղաքային փուլին: Մարզային փուլը հաղթահարած աշակերտներից երկուսն անցել են հանրապետական փուլ:


118 շրջանավարտներից 64-ն ընդունվել են ՎՊՀ առկա ուսուցման համակարգ, որից 13-ը՝ անվճար ուսուցմամբ, 19-ը՝ հեռակա, 26 աշակերտներ էլ ընդունվել են հանրապետության այլ բուհեր, որոնցից 4-ը՝ անվճար:

Վարժարանում գործում է «Բանավեճի ակումբ», որը ակտիվ մասնակցություն ունի քաղաքային և մարզային մրցումներին:

### **ՄԻՆՉԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ**

Հաշվետու ժամանակաշրջանում մարզի դպրոցների ուսուցիչներին համար կազմակերպվել են 3 սեմինար պարապմունքներ, որոնց նպատակն է ուսանողներին և դասախոսներին ծանոթացնել հանրակրթական ծրագրերին, չափորոշիչներին, ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներին, ուսուցման մեթոդներին: Կազմակերպվել և անցկացվել են ասմունքի 2 մրցույթ, շարադրությունների մրցույթ, առարկայական օլիմպիադաներ, 5 բաց դասեր, գիտելիքների ստուգարք: Ըստ դասարանների՝ առարկայական օլիմպիադաներին մասնակցել են 10-րդ դասարաններից՝ 214 աշակերտ, 11-րդ դասարաններից՝ 170 աշակերտ:

Համակարգչային ստուգմամբ անցկացված առարկայական օլիմպիադաները մեծ հետաքրքրություն են առաջացրել աշակերտների շրջանում՝ տեղեկություններ տալով համալսարանի տեխնիկական հազեցվածության մասին: Օլիմպիադայի անցկացման ձևը և արդյունքների ամփոփումը վկայում են, որ նախորդ երկու տարիների համեմատությամբ բնագիտական առարկաների ուղղությամբ աշակերտների մասնակցության թվաքավակի աճ է գրանցվել: Թվաքանակի աճի հետ գրանցվել է նաև աշակերտների բարձր առաջադիմություն հատկապես մաթեմատիկայից, պատմությունից, աշխարհագրությունից, հայոց լեզվից:



Նկար 10. 2013-2015 թթ. կազմակերպված դպրոցական օլիմպիադաների մասնակիցների թվաքանակը

Կատարված աշխատանքների վերլուծությունից պարզվել է, որ նախորդ երկու տարիներին կազմակերպված մրցույթներին (ասմունք, լուսանկարչական աշխատանքներ) և օլիմպիադաներին մասնակցած աշակերտներից 2015 թ. ՎՊՀ առկա ուսուցման համակարգում ընդունվել են 47 աշակերտներ: Հոկտեմբերից անցկացվում են նախապատրաստական դասընթացներ հայոց լեզու, քիմիա, կենսաբանություն առարկաներից: Ըստ աշխատանքային պլանի՝ կազմակերպվել և անցկացվել են մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ մարզի 37 և Վրաստանի 3 դպրոցներում: Մ.թ. հոկտեմբերից իրենց աշխատանքները վերսկսել են Սպիտակի և Ստեփանավանի կրթական կենտրոնների մեթոդիստները:

### ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ

2015 թ. միջազգային գործունեության զարգացման ռազմավարությամբ և աշխատանքային պլանով նախատեսված է եղել.

- արտասահմանյան և ԱՊՀ երկրների առաջավոր բուհերի հետ համագործակցության զարգացում,

- Բոլոնիայի գործընթացի հիմնական գերակայությունները խթանող ծրագրերի մշակում,
- համալսարանի աշխատակիցներին, ուսանողներին դրամաշնորհային ծրագրերի, կոնֆերանսների, սեմինարների մասին իրազեկում,
- դրամաշնորհային նախագծերի իրականացում,
- դրամաշնորհային նախագծերի որոնում և ծրագրերի մշակում,
- մասնակցություն միջմշակութային հաղորդակցության միջազգային լաբորատորիայի աշխատանքներին:

Հաշվետու ժամանակահատվածում կարելի է արձանագրել ՎՊՀ-ի միջազգային գործունեության ակտիվացում: Համալսարանը 10 միջազգային կոնսորցիումների անդամ է: Դրանք եվրոպական երկրների և հետխորհրդային հանրապետությունների առաջավոր բուհեր են: ՎՊՀ-ն համագործակցության պայմանագրեր ունի Կոստրոմայի պետական համալսարանի, Մինսկի լեզվաբանական համալսարանի, Լեհաստանի Կրոսնո և Ղազախստանի Կոկշետաու քաղաքների համալսարանների, Գերմանիայի Դարմշտադտի կիրառական գիտությունների համալսարանի հետ, ինչպես նաև եռակողմ Վանաձոր-Դարմշտադտ-Կոստրոմա համագործակցության պայմանագիր: ՎՊՀ-ն միջմշակութային հաղորդակցության միջազգային լաբորատորիայի ակտիվ անդամ է:

Չնայած լեզվական խոչընդոտին՝ դասախոսների և ուսանողների մասնակցության աճ է արձանագրվել փոխանակության ծրագրում: Այսպես՝ ERASMUS MUNDUS նախագծի 3-րդ փուլում մեր բուհից կրթաթոշակ են շահել 14 ուսանող, 6 դասախոս, 1 վարչական աշխատող: Երկու թվերն էլ բարձր ցուցանիշներ են ողջ նախագծում:

Ուրախալի է, որ մենք աստիճանաբար դառնում ենք ոչ միայն ուղարկող, այլև ընդունող կողմ: Մեր բուհում այդ ծրագրով սովորել է առաջին ուսանողը Լեհաստանի Ադամ Միցկևիչի անվան համալսարանից: Լեհաստանի վերոնշյալ համալսարանից 2 դասախոս 2015 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին մի շարք դասախոսություններով հանդես են մեր բուհում:

Եվրամիության անդամ երկրների հետ գիտակրթական և մշակութային համագործակցության շրջանակներում բացվում է նոր՝ Erasmus + նախագիծը: ՎՊՀ-ում կազմակերպվել է մեծ տեղեկատվական աշխատանք, այդ թվում՝ Erasmus + ազգային գրասենյակի սեմինարը դասախոսներին և ուսանողներին ծրագրերի մանդատին

ծանոթացնելու նպատակով: Նախորդ ուստարում գործընկերների որոնման աշխատանքների արդյունքում մեր համալսարանն այժմ կրեդիտային շարժունության բաղադրիչով երկկողմ պայմանագրեր ունի Յաշիի (Ռուսիան), Գրանադայի (Իսպանիա), Լոնդի (Լեհաստան), Ռուսի (Բուլղարիա) համալսարանների հետ: Նախագծին կարող են մասնակցել ինչպես ուսանողները, այնպես էլ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը:

Ներկայումս տարվում են արդյունավետ աշխատանքներ Լեհաստանի Ա. Միցկևիչի համալսարանի հետ համատեղ մագիստրոսական ծրագիր մշակելու և կրկնակի դիպլոմներ տրամադրելու ուղղություններով:

### ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2015 թվականին բուհի միջոցների հաշվին ուսման վճարի մասնակի փոխհատուցում (զեղչ) 50-90%-ի չափով տրամադրվել է 478 ուսանողի.

- Առկա ուսուցման համակարգ՝ 230 ուսանող
- Հեռակա ուսուցման համակարգ՝ 248 ուսանող

*Աղյուսակ 7. Ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում ստացող ուսանողների թվաքանակն ըստ տարակարգերի.*

Խ/Խ	ՉԻՄԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	առկա	հեռակա
1.	18 տարին լրանալուց հետո մինչև 23 տարին լրանալը առանց ծնողական խնամքի մնացած ուսանողների թվաքանակը	0	1
2.	23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողների թվաքանակը	40	44
3.	3 և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքների ուսանողների թվաքանակը	6	11
4.	3 և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողների թվաքանակը	0	1
5.	Վճարովի համակարգում 2 ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողների թվաքանակը	42	45
6.	Վճարովի ուսուցման համակարգում երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողների թվաքանակը	0	0
7.	1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողների թվաքանակը	19	17
8.	Մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներ	17	32
9.	Սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության 0 միավորից բարձր մինչև 30 միավոր ունեցող ընտանիքների)	2	0

	ուսանողներ		
10.	Հեռավոր լեռնային և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների երեխա ուսանողներ	0	0
11.	Մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներ	5	40
12.	Ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված բարձր առաջադիմությամբ ուսանողներ	16	1
13.	Այլ կարգավիճակ ունեցող ուսանողներ՝ բուհի հայեցողությամբ	2	0
14.	Բուհի աշխատակիցների երեխա	18	7
15.	Մարզական ակնառու հաջողություն ունեցած /ՀՀ չեմպիոն/	0	2
16.	4 կիսամյակ անընդմեջ գերազանցիկ ուսանողներին	22	2
17.	ԿնԳ նախարարի գրության հիման վրա	23	19
18.	սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության միավորից 30.01-ից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներ	8	24
19.	ՀՀ կառավարության կողմից սահմանված հեռավոր լեռնային կամ սահմանամերձ գյուղերի բնակիչ ուսանողներ	10	2
Ընդամենը		230	248

2015-16 ուստարվա առաջին կիսամյակում առաջին անգամ բուհի միջոցների հաշվին ուսման վճարի 100% փոխհատուցում են ստացել «Կենսաբանություն», «Մաթեմատիկա», «Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտությունների առաջին կուրսերի 5 ուսանողներ:

ՎՊՀ-ում սովորող զոհված զինծառայողի երեխա, առանց ծնողական խնամքի և հաշմանդամ ուսանողների թվաքանակը 20 է:

*Աղյուսակ 8. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի յրիվ փոխհատուցում ստացող ուսանողների թվաքանակը.*

Ե/ Ի	Կարգավիճակը	Ուսանողների թվաքանակը			Ընդամենը
		Բակալավրի կրթական աստիճան (առկա ուսուցման համակարգ)	Բակալավրի կրթական աստիճան (հեռակա ուսուցման համակարգ)	Մագիստրոսի կրթական աստիճան (առկա ուսուցման համակարգ)	
1.	Զոհված զինծառայողի երեխա-ուսանող	0	9	0	9
2.	1-ին և 2-րդ կարգի հաշմանդամ, մանկուց հաշմանդամ - ուսանող	1	4	1	6
3.	Երկկողմանի ծնողազուրկ կամ ծնողական խնամքից	3	1	1	5



	գրկված երեխա-ուսանող			
Ընդամենը	4	14	2	20

Համալսարանը համագործակցում է «Լոռու դպրոց», «Միհրան և Ազնիվ Էսեֆյան» բարեգործական խնամակալության հիմնադրամների, «ՎիվաՍելլ» և «ԱՄՔՈՐ» ընկերությունների հետ: Համագործակցության արդյունքում սոցիալապես անապահով 339 ուսանողներ ստացել են ուսանողական վճարի փոխհատուցումներ, կրթաթոշակներ.

*Աղյուսակ 9. Ուսանողական վճարի փոխհատուցումներն ընկերությունների և հիմնադրամների կողմից*

հ/հ	Անվանումը	Ուսանողների թվաքանակը	Գումարի չափը
1.	«Միհրան և Ազնիվ Էսեֆյան» բարեգործական խնամակալության հիմնադրամ	236	5 137 000
2.	«ՎիվաՍելլ» ընկերություն	42	6 092 500
3.	«ԱՄՔՈՐ» ընկերություն	51	4 150 000
4.	«Լոռու դպրոց»	10	600 000
<b>Ընդամենը</b>		<b>339</b>	<b>15 979 500</b>

Հաշվետու տարում համալսարանի 31 աշխատակցի տրամադրվել է 1 350 000 դրամ դրամական օգնություն:

## ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Բազմաբնույթ է եղել նաև համալսարանի մշակույթի կենտրոնի գործունեությունը. բուհում գործող մշակույթի կառույցների աշխատանքներին աջակցություն, ՎՊՀ շրջանակներում միջոցառումների համակարգում, ուսանողության գեղագիտական ճաշակի բարձրացում, ՎՊՀ ուսանողների ստեղծագործական ունակությունների զարգացման խթանում, տաղանդավոր և շնորհալի ուսանողների հայտնաբերում, ներհամալսարանական, արտահամալսարանական և միջբուհական մշակութային միջոցառումների, փառատոների անցկացում, համերգների և ներկայացումների կազմակերպում և այլն:

Հաշվետու տարվա ընթացքում անցկացվել են մշակութային թեմաներով դասախոսություն-քննարկումներ, ֆիլմերի,

ներկայացումների դիտումներ, գեղարվեստական երկերի քննարկումներ, որոնք նպատակաուղղվել են ուսանողների գեղագիտական ճաշակի բարձրացմանը:

Կազմակերպվել են արդեն ավանդական դարձած միջոցառումներ՝ «Մագիստրոսների ավարտական երեկո», «Գիտելիքի օր», «Անկախության օրը Մայմեխի ստորոտին» և այլն, միջհամալսարանական սերտ համագործակցության սկիզբ է դրվել Հայ-սլավոնական համալսարանի հետ. կազմակերպվել է ունիվերսիադա, «Ոսկե աշուն» երիտասարդական փառատոն:

Ուսանողության շրջանում տաղանդավոր և օժտված ուսանողների հայտնաբերման շնորհիվ ՎՊՀ մշակույթի կենտրոնին կից վերակազմավորվել են վոկալի, ժամանակակից և ժողովրդական պարերի խմբերը, գրական խմբակը, որոնք ղեկավարում են մեր ուսանողները՝ հասարակական սկզբունքով:

Որոշակի են ազգային արժեքների սերմանման, ձևավորման աշխատանքները և արդյունքները:

Ազգային արվեստի, մշակույթի, երաժշտության պրոպագանդան գործում իր զգալի ազդեցությունն ունեն յուրաքանչյուր չորեքշաբթի ՎՊՀ դահլիճում կազմակերպվող «Հայֆիլմ» կինոստուդիայի արտադրության ֆիլմերի, հայկական լավագույն ու սիրված ներկայացումների տեսագրությունների դիտումները («Հարսնացուն հյուսիսից», «Մենք ենք, մեր սարերը», «Տաքսի-տաքսի» և այլն):


Հայրենասիրության և հանդուրժողականության դաստիարակման խնդիրները մշտապես արդիական են, որոնք դառնում են մի շարք ավանդական միջոցառումների ատաղձը: Յեղասպանության 100-ամյակին նվիրված բազմաբնույթ միջոցառումները ևս լուծում էին նման խնդիրներ:

Դժվարություններ կան ֆակուլտետների մշակութային գծով պատասխանատուների համակարգման խնդրում, որոնց կարգավորման ուղղությամբ աշխատանքներ են կատարվում:

## ***ՌԵՍՈՒՐՍՆԵՐ***

### ***ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՆԵՐ***

ՎՊՀ բյուջեն 2015 թվականին կազմել է 882,730,200 ՀՀ դրամ: Գրաֆիկ 1-ում ներկայացվում են ՎՊՀ բյուջեի ծավալները 2011-2015 թվականներին:




Նկար.11. ՎՊՀ բյուջեի ծավալները 2011-2015թթ.

Աշխատակազմի ընդհանուր թիվը 31 դեկտեմբեր 2015 թվականի դրությամբ կազմել է 464 մարդ: Աշխատավարձի գծով ծախսերը կազմել են 637 744 700 (վեց հարյուր երեսունյոթ միլիոն յոթ հարյուր քառասունչորս հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ (տե՛ս աղյուսակ 1, գրաֆիկ 2):

Աղյուսակ 9. 2015 թ. աշխատավարձի բաշխվածությունը ըստ աշխատակազմերի /հազ. դրամ/

h/h	Անվանումը	Գումարի չափը
1.	Պրոֆեսորադասախոսական անձնակազմ	346 670,5
2.	Վարչական անձնակազմ	120 431,4
3.	Վարժարան	64 520,2
4.	Վարչատնտեսական	49 638,5
5.	Ուսումնասօժանդակ	35 309,9
6.	Քոլեջ	11 411,3
7.	Շնորհ	6 881,7
8.	Հանձնաժողովների աշխատողներ	2 881,2




Նկար. 12. 2015 թ. աշխատավարձի բաշխվածությունը ըստ աշխատակազմերի /հազ. դրամ/

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատակիցների աշխատավարձի միջին չափը 2015 թ. հետևյալն է.

Աղյուսակ 10. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի աշխատակիցների աշխատավարձի միջին չափը 2015 թ.

Է/հ	Անվանումը	Գումարի չափը
1.	Ամբիոնի վարիչ	183 766
2.	Պրոֆեսոր	208 952
3.	Դոցենտ	157 959
4.	Ասիսենտ	126 691
5.	Դասախոս	99 962



Նկար. 13. Աշխատավարձի ծավալը բյուջեի հանդեպ 2011-2015 թթ.

Համալսարանի աշխատակազմի թվով 17 (տասնյոթ) աշխատակիցներ օգտվել են իրենց ուսանող երեխաների ուսման վարձի գեղջի իրավունքից, որը 2015 թվականին կազմել է 1,682,500 (մեկ միլիոն վեց հարյուր ութսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ: Թվով 166 (մեկ հարյուր վաթսունվեց) աշխատակիցներ բացի ամենամայա աշխատավարձից ստացել են դրամական օգնություններ և խրախուսման գումարներ, որը տարեկան կտրվածքով կազմել է 6,955,600 (վեց միլիոն ինը հարյուր հիսունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

Ֆինանսական աղբյուրներ՝ իրականացված ծրագրերի շրջանակներում հավաքագրվել են հետևյալ դրամական միջոցները. (տե՛ս աղյուսակ 3, գրաֆիկ 4):

Աղյուսակ 11. ՎՊՀ բյուջեի 2015 թ. մուտքեր հազ.դրամ

h/h	Տարակարգ	Հազար դրամ
1	Ուսման վճարներ առկա ուսուցումից	294 958,7
2	Ուսման վճարներ հեռակա ուսուցումից	217 598,9
3	Պետական բյուջեից	162 215,0
4	Հենակետային վարժարան	74 789,3
5	Մնացորդը տարեկազմին	44 686,9
6	Ուսման վճարներ մագիստրատուրայից	37 878,7

7	Շնորհներ	20 453,0
8	Քոլեջի պետական բյուջեից	10 660,0
9	Այլ	10 177,8
10	Քոլեջ՝ վճարովի	4 216,9
11	Դիմորդ	1 737,0
12	Օտար լեզուների ուսուցում	1 453,3
13	Ուսման վճարներ ասպիրանտուրայից	847,3
14	Բանկոմատի շահագործում	600,0
15	Պատճենահանում	457,4

*Աղյուսակ 12. ՎՊՀ բյուջեի 2015 թ. մուտքերի կառուցվածքը տոկոսներով*

h/h	Տարակարգ	Հազար դրամ
1.	Ուսման վճարներ առկա ուսուցումից	294 958,7
2.	Ուսման վճարներ հեռակա ուսուցումից	217 598,9
3.	Պետական բյուջեից	162 215,0
4.	Հենակետային վարժարան	74 789,3
5.	Մնացորդը տարեսկզբին	44 686,9
6.	Ուսման վճարներ մագիստրատուրայից	37 878,7
7.	Շնորհներ	20 453,0
8.	Քոլեջ /պետական բյուջեից/	10 660,0
9.	Քոլեջ վճարովի	4 216,9
10.	Դիմորդ	1 737,0
11.	Օտար լեզուների ուսուցում	1 453,3
12.	Ուսման վճարներ ասպիրանտուրայից	847,3
13.	Բանկոմատի շահագործում	600,0
14.	Պատճենահանում	457,4
15.	Այլ	10 177,8

1. Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերից, այդ թվում.
  - 1.1. Վճարովի ուսուցման ծառայություններից՝ 551 283 600 (հինգ հարյուր հիսունմեկ միլիոն երկու հարյուր ութսուներեք հազար վեց հարյուր) ՀՀ դրամ
  - 1.2. Անվճար համակարգում սովորող ուսանողների ուսման վարձի փոխհատուցման նպաստ ՀՀ պետական բյուջեի

- միջոցներից՝ 147 898 500 (մեկ հարյուր քառասունյոթ միլիոն ութ հարյուր իննսունու իս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ
2. Ուսանողներին կրթաթոշակների վճարման, գիտական և գիտատեխնիկական և այլ դրամաշնորհային ծրագրեր ՀՀ պետական բյուջեի միջոցներից՝ 14,316,500 (տասնչորս միլիոն երեք հարյուր տասնվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ
    - 2.1. Կրթական, գիտահետազոտական և այլ տեղական և միջազգային դրամաշնորհային ծրագրերից՝ 20,453,000 (քսան միլիոն չորս հարյուր հիսուներեք հազար) ՀՀ դրամ
      - 2.1.1. Վճարովի ծառայություններից, այդ թվում.
        - 2.1.1.1. Լրացուցիչ կրթական դասընթացներից՝ 1,453,300 (մեկ միլիոն չորս հարյուր հիսուներեք հազար երեք հարյուր) ՀՀ դրամ
        - 2.1.1.2. Բազումի մարզաառողջարանային հանգրվանի ամառային ճամբարից՝ 921 000 (ինն հարյուր տասնմեկ հազար) ՀՀ դրամ
        - 2.1.1.3. Քննությունների կազմակերպման ծառայություններից՝ 1 737 000 (մեկ միլիոն յոթ հարյուր երեսուկոթ հազար) ՀՀ դրամ
        - 2.1.1.4. ՎՏԲ բանկի բանկումատի շահագործման ծառայությունից՝ 600,000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ
        - 2.1.1.5. Հիմնական միջոցների օտարումից՝ 200,000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ
        - 2.1.1.6. ՎՏԲ Հայաստան Վանաձորի մասնաճյուղ բանկում ՎՊՀ դրամական միջոցների նկատմամբ հաշվարկված և վճարված տոկոսային եկամուտներ՝ 738 694 (յոթ հարյուր երեսունու իս հազար վեց հարյուր իննսունչորս) ՀՀ դրամ
    3. Համալսարանի քոլեջի անվճար և վճարովի համակարգերում սովորող ուսանողների վարձավճարներից՝ 14,876,900 (տասնչորս միլիոն ութ հարյուր յոթանասունվեց հազար ինն հարյուր) ՀՀ դրամ
    4. Համալսարանի հենակետային վարժարանին պետական բյուջեից՝ 74,789,300 (յոթանասունչորս միլիոն յոթ հարյուր ութսունինը հազար երեք հարյուր) ՀՀ դրամ:
    5. Ֆինանսական տարում օգտագործված դրամական միջոցների ընդհանուր չափը՝ 799 524 200 (յոթ հարյուր իննսունինը միլիոն

հինգ հարյուր քսանչորս հազար երկու հարյուր), որը օգտագործվել է կանոնադրական նպատակների իրականացման նպատակով:

*Աղյուսակ 13. Ֆինանսական տարում օգտագործված դրամական միջոցների ընդհանուր չափը*


1	Աշխատավարձ, եկամտային հարկ, անաշխատունակության նպաստներ	639 832,1
2	Այլ ծախսեր	36 375,2
3	Գոմունալ վճարներ, կապ	32 766,0
4	Գործուղումներ	21 410,2
5	Կրթաթոշակ	17 722,5
6	Սարքեր և սարքավորումներ, գույք	14 294,8
7	Հիմնադրամներին	11 050,0
8	Հավատարմագրման համար	9 020,4
9	Տրանսպորտ, սպասարկում և փոխադրում	3 953,0
10	Կապիտալ ներդրումներ և շինարարություն	3 904,8
11	Հարկեր և տուրքեր	2 635,5
12	Ղեկավարի ֆոնդ	2 544,0
14	Բազումի ճամբարի համար սնունդ	2 062,3
15	Ներկայացուցչական ծախսեր	1 653,4

*Աղյուսակ 13. Գոմունալ ծառայությունների վճարները 2015 թ.*

1	Էլեկտրականության բաշխման և դրա հետ կապված ծառայություններ	13482,8
2	Գազի բաշխման և դրա հետ կապված ծառայություններ	12417,9
3	Կապի վճարներ և ինտերնետ	6452,3



4	Ջրի բաշխման և դրա հետ կապված ծառայություններ	754,0
5	Այլ կոմունալ ծառայություններ	613,0
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>33720,0</b>



Նկար 14. Կապիտալ ներդրումների ծավալները 2011-2015 թթ.

2015 թ. բյուջեի նախահաշվում նախատեսվել է 126 856 950 դրամ, որից ծախսվել է 102 777 463 դրամ կամ նախատեսված գումարի 81.02%-ը: ՎՊՀ կարիքներին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերման համար սկսվել են գնումների կազմակերպման գործընթացները:

Շրջանակային համաձայնագրերով իրականացվել է տասնվեց մրցույթ, որից չորսը՝ «ՎՊՀ-ՇՀԱՇՁԲ 11/4-15/1», «ՎՊՀ- ՇՀԱՇՁԲ 11/4-15/3», «ՎՊՀ-ՇՀՏՁԲ 15/11-15/2», «ՎՊՀ – ՇՀՏՁԲ 15/11-15/3» ծածկագրերով ՇՀ ընթացակարգերը գնահատող հանձնաժողովը հայտարարել է չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին ՀՀ օրենքի» 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը (ոչ մի հայտ չի ներկայացվել):

Պարզեցված ընթացակարգով իրականացվել է չորս մրցույթ, որից մեկը՝ «ՎՊՀ - ՊԸԱՊԶԲ 15/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգը գնահատող հանձնաժողովը հայտարարել է չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին ՀՀ օրենքի» 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը (ոչ մի հայտ չի ներկայացվել):

ԲԸԱՀ ընթացակարգով կնքվել են բազմաթիվ պայմանագրեր, որոնք իրականացվել են պատշաճ և լիարժեք:

Գնումներ կատարվել են նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթերի (հաշիվ-ապրանքագիր և այլն) հիման վրա:

*Աղյուսակ 14. 2015 թվականի ընթացքում կատարված գնումները*

<i>h/h</i>	<i>Դրամական միջոցների ելքեր</i>	<i>Տարեկան հաստատված ցուցանիշ</i>	<i>Կատարողական</i>	<i>Մնացորդ</i>
<b>Ապրանքներ</b>				
1.	Գրենական պիտույքներ և զրասենյակային նյութեր	4293260	3582490	710770
2.	Շինանյութեր	4915438	4829522	85916
3.	Տնտեսական, սանհիգիենիկ, լվացքի միջոցներ	1893660	1219327	674333
4.	Դեղագործական արտադրանք	563800	233760	330040
5.	Համակարգչային տեխնիկա	4167500	4125350	42150
6.	Էլեկտրատեխնիկա, ռադիոտեխնիկա, կենցաղային սարքեր	866500	239800	626700
7.	Բենզին պրեմիում	2520000	2408000	112000
8.	Մնողամթերք	2303020	2216445	86575
9.	Ավտոպահեստամասեր	2275650	2212570	63080
10.	Հանդերձանք և անկողնային պարագաներ	779800	465650	314150
11.	Գրասենյակային և կենցաղային կահույք	722000	668000	54000
12.	Ծաղիկներ և ծաղկեպսակներ	410000	158700	251300
13.	Լրատվամիջոցներ/ տեղեկագրքեր, մամուլ/	1500000	1294250	205750
14.	Գրքեր	1924000	1198332	725668
15.	Ուսումնական պրոցեսի համար նյութեր	100000	41662	58338
16.	Քիմիական արտադրանք	30138	10770	19368
17.	Մպորտային պարագաներ	718600	242640	475960
18.	Լաբորատորիայի օպտիկական և ճշգրիտ սարքեր	10359880	8500000	1859880

19.	Նվերներ և պարգևներ	975500	544600	430900
<b>ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ</b>				
1.	Հատուկ պաշտպանվածություն պահանջող՝ պետական նշ. փաստաթղթերի տպագրություն	1800000	1721000	79000
2.	Տպագրություն	6885500	3810650	3074850
3.	Տանիքի վերանորոգման աշխատանքներ	4992000	3904803	1087197
4.	Տանիքի ներկման աշխատանքներ	450000	450000	0
5.	Մեղավների և կրծքանշանների պատրաստում	714800	524200	190600
6.	Փորման և խողովակների փոխման աշխ.	40000	18200	21800
7.	Դիտահորերի մաքրման աշխատանքներ	50000	20000	30000
8.	Գազաեռակցման աշխատանքներ	150000	131100	18900
9.	Գրապահարանների պատրաստման համար մասնագետի հրավեր	150000	130000	20000
10.	Մայրիկների անցկացում	990000	982780	7220
11.	Շինությունների ընթացիկ նորոգում	800000	249040	550960
<b>ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>				
1.	Մարքերի և սարքավորումների սպասարկում	8949800	8827800	122000
2.	Ինտերնետային կապի տրամադրում	999000	954000	45000
3.	Տրանսպորտային միջոցների տեխն. սպասարկ	910000	345100	564900
4.	Ավտոմեքենայի լվացում	80000	28000	52000
5.	Տրանսպորտային փոխադրումներ	920000	606520	313480
6.	Տրանսպորտային ապահովագրության ծառայություն	700000	572080	127920
7.	ՀՄ հաշվապահ	170000	170000	0
8.	Հակավիրուսային ծրագրի ժամկետի երկարացում	385000	385000	0
9.	Ցուցանակների պատրաստում	150000	92500	57500
10.	ՎՊՀ-ին պատկանող գույքի գնահատում	310000	15000	295000
11.	Լուսանկարների տպագրում	50000	16100	33900
12.	Նոտարական ծառայություններ	100000	36000	64000
13.	Անշարժ գույքի վարձակալություն	1122000	961800	160200
14.	Ուսումնական և արտադրական պրակտիկա	4000000	1484720	2515280

15.	Պարտադիր բժշկական զննություն	1995000	720000	1275000
16.	Բժիշկ-մասնագետների կողմից մատուցվող ծառայություններ	125000	55000	70000
17.	Ֆինանսական աուդիտի ծառայություններ	990000	720000	270000
18.	Տանիքների տեխնիկական հսկողության ծառայություն	70000	70000	0
19.	Նախագծային նախահաշվային ծառայություններ	300000	165000	135000
20.	Ջրի բաշխման և դրա հետ կապված ծառայություններ	800000	791650	8350
21.	Գազի բաշխման և դրա հետ կապված ծառայություններ	16857504	14358572	2498932
22.	Գազասպառման համակարգի տեխ. հսկողություն	500000	433746	66254
23.	Տեխնիկական անվտանգության փորձաքննության ծառայություն	200000	166954	33046
24.	Էլեկտրականության բաշխման և դրա հետ կապված ծառայություններ	13100000	13004402	95598
25.	Աղբահանության ծառայություն	400000	363000	37000
26.	Ծխնելյազների սպասարկում	100000	45000	55000
27.	Հիգիենիկ հակահամաճար. ծառ.	240000	230000	10000
28.	Հեռահաղորդակցման ծառայություններ	5200000	4935965	264035
29.	Փոստային ծառայություն	300000	143110	156890
30.	Օբյեկտների պահպանման ծառայություն	3360000	3360000	0
31.	Հեռուստատեսային և ռադիո հեռարձակման ծառայություն	700000	282000	418000
32.	Մամուլում հայտարարությունների հրապարակում	350000	219000	131000
33.	ՀԴՄ-ների սպասարկում	93600	93600	0
34.	ՎՊՀ-ի կայքի սպասարկում	100000	64800	35200
35.	Էլեկտրոնային ստորագրության սպասարկման ծառ	6000	6000	0
36.	Տերմինալներվերային համակարգի կազմակերպում (ներառյալ սարքավորումները)	990000	990000	0
37.	ՎՊՀ-ի էլեկտրոնային, գովազդային նյութերի պատրաստում	375000	30000	345000
38.	Գրավոր թարգմանության ծառայություններ	50000	9000	41000
39.	ՎՊՀ-ի կաթսայատան շրջանառու էլեկտրաշարժիչի վերանորոգման	120000	120000	0

	ծառայություն			
40.	Հյուրանոցային ծառայություն	300000	180000	120000
41.	Խոհարարական ծառայություններ	160000	155000	5000
42.	Մենդի մատուցման ծառայություն	839000	8900	830100
43.	Հաշվապահական ծառայություններ	50000	50000	0
44.	Ներկայացուցչական ծախսեր	999000	428503	570497
Ընդամենը		126856950	102777463	24029487

**ԳՐԱԴԱՐԱՆ**

Հաշվետու ժամանակամիջոցում (2015 թ.) համալսարանի գրադարանի ընթերցողների թիվը կազմել է 2187, հաճախումների թիվը՝ 8190: Գրքերի տացքը կազմել է 23943 գիրք, ինչը 5523-ով պակաս է նախորդ տարվա համեմատ: Այդ և նախորդ տարիներին նկատվող անկումը ունի երկու օբյեկտիվ պատճառ՝ 1. կրճատվել է ուսանողների թիվը, 2. գրադարանի գրաֆոնդը զգալի չափով հնացել է և այլևս չի համապատասխանում գիտակրթական նոր պահանջներին: Փորձը ցույց է տալիս, որ գրադարանը կարողանում է բավարարել հարցված յուրաքանչյուր տասը գրքերի միայն կեսը: Դա օրինաչափորեն հանգեցնում է ուսանողների դժգոհությանն ու հիասթափությանը: Այս հանգամանքը հրամայական է դարձնում գրադարանի գրաֆոնդի համալրումը, խնդիր, որի լուծումը ոչ միայն կնպաստի ուսումնագիտական գործընթացի բարելավմանը, այլև բուհի հեղինակության աճին: Խնդրի կարևորության գիտակցումով վերջին տարիներին գրքագնմանը հատկացվող գումարը 2014 թ. համեմատ ավելացել է ավելի քան 4,6 անգամ, իսկ քանակական առումով՝ կրկնակի (2014 թ. գնված 105 գրքի համեմատ 2015 թ. գնվել է 240 միավոր գիրք): Երկու տարիների կտրվածքով գրքագնմանը հատկացված գումարի աճի համեմատությամբ գնված գրքերի քանակական աճի թույլ դինամիկան ունի մի քանի պատճառներ: Նախ՝ շուկայում բարձրացել են գրքերի գները: Երկրորդ՝ եթե 2014 թ. շեշտը դրվել է գրքերի մատչելիության վրա, ապա 2015 թ. հաշվի է առնվել գրքերի կարևորությունը: Եվ վերջապես՝ 2015 թ. հատուկ ուշադրություն է դարձվել համալսարանի նորաբաց իրավագիտություն, սերվիս, կիրառական մաթեմատիկա և ինֆորմատիկա մասնագիտությունների ապահովմանը: Այս մասնագիտությունների գրքերը, ինչպես հայտնի է, նկատելիորեն թանկ են:

Ընդհանուր առմամբ գրադարանը 2015 թ. համալրվել է 1222 միավոր գրականությամբ, որից 271 միավոր (177 անուն) ձեռք է բերվել բուհի միջոցներով, իսկ 989 միավորը (211 անուն) նվիրաբերվել է հրատարակչությունների, այլ բուհերի, անհատ քաղաքացիների և ՎՊՀ աշխատակիցների կողմից:

Գնված գրականության ավելի քան քառորդ մասը (61 միավոր) կազմում է ուսումնական և ուսումնամեթոդական գրականությունը, որի պահանջարկը առավել մեծ է: Երեք քառորդից մի փոքր պակաս մասը կազմում է գեղարվեստական և գիտական գրականությունը:

Հաշվի առնելով գրադարանի համալրման գործում առկա դժվարությունները՝ ընթացիկ տարում շարունակվել են նոր հրատարակված բուհական դասագրքերի և ուսումնամեթոդական գրականության բազմացման և վերանորոգման աշխատանքները: Դրա արդյունքում կազմվել է 95 ամբողջական գիրք, մասնակի նորոգվել է 224 գիրք:

Նոր գրականության պահանջարկի բավարարման է կոչված համալսարանի լոկալ էլեկտրոնային գրադարանը, որը գործարկվեց 2015 թ. նոյեմբերին: Ներկայումս նրա 42 մասնագիտական բաժիններում ներբեռնված ավելի քան 3600 անուն գրքերը հիմնականում 2010 թ. հետո հրատարակված գրքեր են:

2015 թ. համալսարանը բաժանորդագրվել է 21 անուն օրաթերթ, շաբաթաթերթ ու ամսագիր՝ 842.660 դրամ ընդհանուր արժեքով: Նրանցից 14-ը հայալեզու են, 7-ը՝ ռուսալեզու:

Հաշվետու տարում ավարտվել են գրադարանի հայալեզու գրականության գույքագրման աշխատանքները: Թվայնացված գրքացուցակների համապատասխան մշակման արդյունքում արդեն գալիք տարում գրադարանում կգործարկվի էլեկտրոնային քարտարանը, գրաֆոնդը կդառնա թափանցիկ, նկատելիորեն կբարելավվի գրքի սպասարկումը:

### **ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐ**

Հաշվետու տարում ուսումնական մասնաշենքերում կատարվել են անհրաժեշտ շինարարական-վերանորոգման համալսարանի նյութատեխնիկական բազայի ապահովման, բուժսպասարկման, անվտանգության տեխնիկայի ապահովման, տարածքների մաքրման, էլեկտրաէներգիայի, ջրի և գազի անխափան մատակարարման, շուրջօրյա ապահովման, գույքի տեղափոխման և վերանորոգման, ուսումնական մասնաշենքերում, բակային տարածքներում պատշաճ

մաքրության ապահովման, մասնաշենքերում, բակային տարածքներում պահակային հսկողության իրականացման աշխատանքներ:

## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Կատարվել են ամենօրյա սպասարկման աշխատանքներ այն բաժիններում, որտեղ առաջ են եկել որոշակի խնդիրներ՝ կապված համալսարանում առկա համակարգչային տեխնիկայի և ներքին ցանցի կամ համացանցի աշխատանքի հետ:

Համացանցի ազատ մատչելիությունն ապահովելու նպատակով տեղակայվել է Wi-Fi տիպի բաշխիչ սարք վարչական մասնաշենքի երկրորդ և ուսումնական գլխավոր մասնաշենքի չորրորդ հարկերում: Բուհի ներքին ցանցի վերականգնման և վերանորոգման աշխատանքներ են կատարվել վարչական և գլխավոր մասնաշենքերում:

Համալսարանի ներքին ցանց են ներառվել մաթեմատիկայի ամբիոնի կաբինետը, իրավախորհրդատվական և հոգեբանական կենտրոնները:

Իրականացվել են համալսարանի ներքին ցանցի ընդլայնման և բարելավման աշխատանքներ: Բարեկարգվել է ցանցի մալուխային տնտեսությունը:

Ներքին ցանցի աշխատանքը բարելավելու նպատակով ցանցային հանգույցներ են տեղադրվել գնումների համակարգման բաժնում և բարեփոխումների բաժնում, իսկ հաշվապահությունում ավելացվել է ևս մեկ հանգույց:

Փոխարինվել են բազմաթիվ վնասված մալուխներ, որոնք խաթարում էին ցանցի նորմալ աշխատանքը (քոլեջում, ֆիզմաթ դեկանատից ուսումնամեթոդական վարչություն, խմբագրությունում, համագործակցության բաժնում, գրադարանում, պրակտիկայի բաժնում, մշակույթի կենտրոնում):

Հաշվետու ժամանակաշրջանում փոխարինվել են հետևյալ ստորաբաժանումների ֆիզիկապես և բարոյապես մաշված համակարգիչների պահեստամասերը, կատարվել է օպերացիոն համակարգի և անհրաժեշտ ծրագրային ապահովման տեղակայում. ուսումնամեթոդական վարչություն՝ երկու համակարգիչ, պրակտիկայի բաժին՝ մեկ համակարգիչ, լրագրության կաբինետ՝ երեք համակարգիչ, քոլեջ՝ երեք համակարգիչ, գրադարան՝ մեկ համակարգիչ: Պահեստում առկա նոր պահեստամասերից հավաքվել է մեկ համակարգիչ, որը օպերացիոն համակարգի և անհրաժեշտ ծրագրային ապահովման տեղակայումներից հետո հանձնվել է մագիստրատուրայի բաժնին:

Կատարվել է հետևյալ ստորաբաժանումների համակարգիչների օպերացիոն համակարգերի և անհրաժեշտ ծրագրային փաթեթների վերածրագրավորում. գիտական կաբինետ՝ երեք համակարգիչ, մանկավարժության ֆակուլտետի դեկանատ՝ երկու համակարգիչ, պատմաշխարհագրական ֆակուլտետի դեկանատ, մաթեմատիկայի ամբիոն, նոր տեխնոլոգիաների լաբորատորիա՝ գլխավոր համակարգիչ, կոմպլեքս լաբորատորիա, արխիվ, գրադարան, իրավաբանական խորհրդատվության, լրատվության և տպագրության, կրթության որակի ապահովման բաժիններ:

Կատարվել է հաշվետու տարում համալսարանի կողմից ձեռք բերված համակարգչային տեխնիկայի և վերջիններիս համապատասխան ծրագրային միջոցների տեղակայում գրադարանում, պրակտիկայի բաժնում, անցակետում, շրջանավարտների և կարիերայի աջակցման կենտրոնում:

Համալսարանում առկա բոլոր համակարգիչներում թարմացվել են հակավիրուսային ծրագրի լիցենզիաները:

Կատարվել է ինտերակտիվ գրատախտակների վերակարգաբերում աշխարհագրության և հոգեբանության կաբինետներում, նոր տեխնոլոգիաների լաբորատորիայում:

Իրականացվել են էլեկտրոնային գրադարանի ստեղծման նպատակով գրադարանում տեղակայված տերմինալ սերվերային համակարգի ծրագրային կարգաբերումներ, մալուխային ցանցի կազմակերպում, վերջինիս ներառում համալսարանի ներքին ցանց:

### **ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ**

Հաշվետու ժամանակահատվածում ՎՊՀ լրատվության և տպագրության բաժնի գործունեությունը միտված է եղել ներհամալսարանական կյանքին և նորություններին հանրությանն իրազեկելուն, դրանով իսկ՝ դեկավարման թափանցիկությունն ու հաշվետվողականությունն ապահովելուն: Բաժինն աշխատանքներ է իրականացրել հիմնականում հետևյալ ուղղություններով՝


- ներբուհական իրադարձությունների լուսաբանում և իրազեկում ՋԼՄ-ներով.
- «Բանբեր ՎՊՀ» հաղորդաշարի, տեսաֆիլմերի, գովազդերի, հայտարարությունների պատրաստում.
- «Վանաձորի պետական համալսարան» երկշաբաթաթերթի հրատարակում.



- գիտական նյութերի ժողովածուների ձևավորում և հրատարակության պատրաստում.
- ուսումնական ձեռնարկների տպագրություն, համալսարանի համացանցային կայքի վարում և թարմացում.
- տեսաֆոտոարխիվավորում, ձևավորման և տպագրության աշխատանքներ և այլն:

Հաշվետու ժամանակահատվածում լույս է տեսել «Վանաձորի պետական համալսարան» երկշաբաթաթերթը 12 համար, ձևավորվել և տպագրվել են համալսարանում կազմակերպված բոլոր միջոցառումների հրավիրատուներ, ծրագրեր, գովազդային թերթիկներ, ինչպես նաև պայուսակներ, թղթապանակներ, պաստառներ, այլ նյութեր: Կատարվել են ուսումնասօժանդակ պարապմունքների համար անհրաժեշտ տպագրական, պատճենահանման, կազմարարական աշխատանքներ:

2015 թվականին ավելացել է համալսարանի կայքէջի դիտումների թիվը. նախորդ տարի այն կազմել է 170 296, այժմ մոտ 180 000 է:



Նկար 15. 2014-2015 թթ. Համալսարանի կայքի այցելուների թվաքանակը

Հաշվետու ժամանակահատվածում տեղադրվել են նորություններ (190), հայտարարություններ (120), կարգեր, կանոնակարգեր (26), 1 նոր գիտական նյութերի ժողովածու, բոլորը՝ PDF տարբերակով: Կայքէջում

գետեղվել են նաև միջազգային ուսումնագիտական ծրագրերին վերաբերող բազմաթիվ նյութեր, գործել է հարց-պատասխան բաժինը:

Նկատելիորեն ավելացել է համալսարանում տեղի ունեցած միջոցառումների մասին պատմող նյութերի հանդեպ հանրային հետաքրքրության աստիճանը. նորություններն առավելագույնը ապահովել են 2272 ընթերցում, ինչը կայքէջը մրցունակ է դարձնում հանրապետական լրատվադաշտում: Հայտարարություններն ունեցել են մինչև 3256 ընթերցում:

Հաշվետու ժամանակահատվածում կայքը պարբերաբար թարմացվել է՝ ազատվելով հնացած տեղեկատվական նյութերից, սակայն ամբողջությամբ ազատվել դրանցից չի հաջողվել:

Կայքի նյութերն այժմ տեղադրվում են նաև ռուսերեն և անգլերեն լեզուներով:

Թեմատիկ նյութերում մեծ տեղ են զբաղեցրել բուհի տարբեր ստորաբաժանումների մասին պատմող հոդվածները, ռեպորտաժները, միջազգային բուհերում ուսումնառությունը շարունակող ուսանողների մասին ակնարկները:

Այս տարի համեմատաբար շատ են տարբեր միջազգային ծրագրերին վերաբերող, Եվրոպա մեկնող ուսանողների, ինչպես նաև դասախոսների մասին պատմող նյութերը:

*Աղյուսակ 6. Հրատարակումների թիվը*

<b>Հ/հ</b>	<b>Բովանդակություն</b>	<b>Քանակ 190</b>
1.	Միջազգային անցուդարձը ներկայացնող (արտերկրում և մեզ մոտ գտնվող ուսանողներ, դասախոսներ, գործող միջազգային ծրագրեր և այլն)	20
2.	Միջազգային և հանրապետական գիտաժողովներ, ՈԻԳԸ, համաժողովներ	19
3.	Բուհի առօրյայի (համակարգչային կենտրոն, հարատև ուսուցման կենտրոն, տարբեր դասընթացներ, ՈԱԿ, նորամուծություններ)	22
4.	Ամենամյա միջոցառումներ (Ֆակուլտետի օր, ստուգման գրքույկների, շնորհակալագրերի, դիպլոմների հանձնման արարողություններ և այլն)	28
5.	Հենակետային վարժարան (առօրյան, միջոցառումները)	11
6.	ՎՊՀ քոլեջ (առօրյան, միջոցառումները)	6
7.	Բուհ-դպրոց կապ	10
8.	Տոներ, հիշատակի օրեր, ֆլեշմոբներ	21
9.	Ուսանողական խորհուրդ	16
10.	Մարզական նվաճումներ, ռազմահայրենասիրական և մարզական միջոցառումներ	10
11.	Ռեկտորատի, գիտխորհրդի, ամբիոնների նիստեր, քննարկումներ	10

12.	Ճամբար	5
13.	Միջոցառումներ գրադարանում	6
14.	Արտադրական պրակտիկա (բուհում և բուհից դուրս)	6

Հաշվետու ժամանակաշրջանում բուհի ֆեյսբուքյան էջի ընկերների թիվն ավելացել է (2530-ից դարձել է 4470):

Սոցիալական այս ցանցում համագործակցությունը ներառում է հանրապետության տարբեր մարզերի դպրոցների, գործարարների, աշխատակիցների, շրջանավարտների, ուսանողների, դպրոցականների, որոնց ամեն օր հասանելի են բուհի անցուդարձի մասին պատմող ռեպորտաժները, բուհական կյանքի այլ իրադարձություններ, հայտարարություններ և այլն: Նյութերը տեղադրվել են ոչ միայն վերը նշված խմբերում, այլև անհատների (դասախոսների, ուսանողների) ֆեյսբուքյան անձնական էջերում:

Ստորև ներկայացվում է հաշվետու ժամանակահատվածում բուհի կայքէջում և ֆեյսբուքյան էջում ամենից շատ ընթերցված և գնահատված նյութերի հնգյակը.


1. «Հայտնի է ՎՊՀ ընդունված ուսանողների թիվը» (2272)
2. «ՎՊՀ-ն այս տարի հրաժեշտ տվեց 145 մագիստրոսների» (1500)
3. «Բարի գալուստ ՎՊՀ (սեպտեմբերի 1)» (1281)
4. «Հայոց հարցի լուծումը ՎՊՀ հենակետային վարժարանի կողմից» (1051)
5. «ՎՊՀ-ից դեպի եվրոպական բուհեր» (1022):

Լրատվության և տպագրության բաժնի հետ համագործակցում և համալսարանի պաշտոնական կայքէջի նյութերն իրենց էջերում տեղադրում են բազմաթիվ կայքեր, որոնք այսօր ավելի շատ ընթերցում ունեն, քան տպագիր հանրապետական թերթերը: Այս տարի ևս բուհի կայքից իրենց էջերում նյութեր են տեղադրել [www.hraparak.am](http://www.hraparak.am), [www.armtur.am](http://www.armtur.am), [www.news.am](http://www.news.am) կայքերը:

Ֆեյսբուք սոցիալական ցանցում ակտիվ գործում է նամակների բաժինը. բազմաբնույթ հարցերով էջին դիմում են ինչպես բուհի ուսանողները, այնպես էլ դպրոցականները:

Հաշվետու ժամանակաշրջանում զգալի ընդհատումներով է եթեր հեռարձակվել «ՎՊՀ բանբեր» հաղորդաշարը, սակայն այդ բացը լրացվել է լրատվական թողարկումների, ինչպես նաև ՎՊՀ-ի youtube-ի էջի միջոցով: Իսկ ընդհատումները կապված են նոր պայմանագրի կնքման դժվարությունների հետ:

Ստորև ներկայացնում ենք բուհական անցուդարձը լուսաբանած մարզային հեռուստաընկերություններին.



*Նկար 16. Համալսարանին վերաբերող լուսաբանումները մարզային հեռուստարձևերությունների կողմից*

Այս տարի բուհի միջոցառումներն արձագանքել են նաև հանրապետական «Հ1», «Հ2», «Կենտրոն», «ARM news» հեռուստաալիքները: Հերոս Զ. Գևորգյանին նվիրված միջոցառումը լուսաբանեցին «Հ1», «Հ2», «Կենտրոն», «ARM news» հեռուստաալիքները, «Զինուժի» մի ամբողջ թողարկում ևս նվիրվեց հերոսի անունը կրող վարժարանին: «Հ2»-ի լրատվական թողարկումը ներկայացրեց մագիստրանտների դիպլոմների հանձնման արարողությունը և այլն:

Բաժնի ընդհանուր գործունեության վրա որոշակի բացասական ազդեցություն է գործում այն հանգամանքը, որ դեռևս չկա բաժնի ընդհանուր կանոնակարգը և համացանցային կայքէջի կարգը, որոնք աշխատանքային պլանով նախատեսված ժամկետներում չեն կատարվել, սակայն աշխատանքներն ավարտվել են և առաջիկայում կներկայացվեն հաստատման:

Հայաստանյան բուհերի լրատվության մասի պատասխանատուների միջև ձևավորված համագործակցության շնորհիվ ձեռք է բերվել հնարավորություն ներկայանալու ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ իրականացվող «ARM news» հեռուստաընկերության «Ալմա Մատեր» հատուկ նախագծում: Հաղորդման «Բուհական էջ» հատվածում մի քանի տեսանյութերի

միջոցով առաջին անգամ անդրադարձ կատարվեց մարզային բուհերին: Թողարկման շրջանակում ներկայացվեց համալսարանի կարգավիճակ ստացած բուհը, նրա 46-ամյա պատմությունը, ուսանողների շարժունությունը և այլն:

Առաջին անգամ ստեղծվել է տեսանյութերի արխիվավորման նոր համակարգ. միջոցառումները ֆիլմի ձևով մոնտաժվում, ձայնագրվում և տրվում են կազմակերպիչներին՝ յուրաքանչյուր բաժնի հնարավորություն տալով ունենալու սեփական արխիվը:

Ստորև ներկայացնում ենք համալսարանական անցուդարձը լուսաբանած մարզային և հանրապետական տպագիր լրատվամիջոցներին.

Աղյուսակ *Համալսարանին վերաբերող հրապարակումները մարզային և հանրապետական թերթերում*

Աղյուսակ 15. *Համալսարանին վերաբերող հրապարակումները մարզային և հանրապետական թերթերում*

h/h	Թերթի անվանումը	2014թ.	2015թ.
1.	«Լոռու մարզ»	87	82
2.	«Վանաձորյան խճանկար»	23	45
3.	«Հեռք»	21	27
4.	«Առավոտ»	14	17
Ընդամենը		145	171

Առաջիկա տարում ևս համալսարանի քաղաքականության գլխավոր շեշտադրումը ուղղված կլինի մինչև այժմ նախաձեռնած գործերը ավարտին հասցնելուն՝ կարևորելով դրանց բովանդակային պլանի կատարելությունը: Ահա թե ինչու 2015 թվականի անելիքների ցանկում ավելի շատ տեղ են գտել ինքնավերլուծության արդյունքում վերհանված թույլ կողմերի վերացման ուղղությամբ աշխատանքները և միջոցառումները:

2016 թ. կնշանավորվի նրանով, որ համալսարանի պատմության մեջ առաջին անգամ սեփական միջոցներից (ոչ բյուջետային) մոտ 56 մլն դրամ է նախատեսվում գիտական հետազոտությունների համար. նախատեսվում է գումարներ տրամադրել ներբուհական դրամաշնորհներին, գիտական գործուղումներին, աշխատակիցների աշխատությունների տպագրությանը և այլն: Դա կնպաստի նպատակաուղղված հետազոտություններ կատարելուն:

**ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ .....	3
ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ .....	13
ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ .....	18
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ .....	21
ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ .....	27
ՔՈԼԵԶ .....	34
ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ .....	35
ՄԻՆԶԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄ .....	36
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ .....	37
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ .....	39
ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ .....	41
ՌԵՍՈՒՐՍՆԵՐ .....	42
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՆԵՐ .....	42
ԳՐԱԴԱՐԱՆ .....	53
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ .....	55
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ .....	56